

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ

Այն լուրը թէ Էջմիածնի գանձարանին վերջերս 200,000 բուլղի գողութիւն մը կատարուեր է, բոթի մը պէս պայթեցաւ ամբողջ Հայութեան մէջ, կողկաս թէ Հայաստան, Կ. Պոլսէն մինչեւ Ամերիկա, Պուլկարիայէն մինչեւ Եգիպտոս, հաւասարապէս ցնցելով թէ՛ անոնք որ հայրենի հողին վրայ կ'ապրին եւ թէ՛ անոնք որ դէշ հով մը, այս վերջին երկու տարիներս մանաւանդ, տարտղնած է աշխարհի ամէն կողմը: Մեր ցաւերուն ահագնութեանը մէջ, մեր սրտին միշտ մօտիկ կը մնայ Էջմիածնի պայծառութիւնը, անոր համար զուրգուրանք ու հոգածութիւն միշտ իրենց մեծ սեղը ունին էն ահօնի վերջերս լը պատրաստ սրտերուն մէջ անգամ, այնպէս որ Մայր-Աթոռէն պաշտօնապէս տրուած հերքումը թեթեւացում մը առաջ բերաւ ամէն կողմ ու փարատեց անձկութիւններ որոնք ամենուրեք խիղճերը կը վրդովէին:

Իրաւ ալ, լուրը, այնպէս ինչպէս տրուած էր, ճիշդ չէր: Էջմիածնէն վերջերս մէկէնիմէկ 200,000 բուլղի գողութիւն մը կատարուած չէ: Բայց ճիշդ առիթն է Էջմիածնի ճշմարտապէս սիրողներուն, պատմութեան ու ազգայնութեան մեծ յիշատակները խտացող այդ կեդրոնին նշանակութիւնը բարձրացնելուն աչքին առջեւ գնել հոն ախրող կացութիւնը, իր ամբողջ մերկութեամբը, սուանց սին բողբոջութիւններու ու աղիւտաբեր ինքնախաբէութեան:

Այսօր ոչ ոքիւն համար դադարից մըն է թէ Էջմիածնի երբեք այնքան ապականեալ ու անկեալ վիճակի մէջ չէր եղած որքան այժմ: Չեղծում, յափշտակութիւն, դուրսութիւն, կաշտակութիւն, — ահա Էջմիածնի այսօրուան պատկերը: Մեզի ծանր է զրել այս սողորը, բայց հարկ է որ զրուին ու Հայութեան աչքին առջեւ զրուին: Կաթողիկոսը, որուն կարող կը պահի, շատ լաւ կը տեսնէ, գիտէ այս ամէնը, բայց լուս կը մնայ: 1893էն մինչեւ այսօր վեհարանը առնուազն 250,000 բուլղի գողութիւն մը մտած է, բայց յայտնի չէ թէ ինչ եղած է: Կաթողիկոսը շրջապատողները, անոնք որոնք կը վայելին այդ դանձր, կը նկրան տարածել սա հաւատքը թէ այդ զրամը իզմիրլեան սրբազանին զրուած է, կամ, վարպետ թեղազրութիւններով, ճարպիկ ակնարկութիւններով, կը սիրեն կնթաղել տալ թէ մասնաւոր նպատակներու գոր-

ծածուած է: Արդ, ասիկա բացարձակ ստուերն է: Բայց հինգ հազար (5,000) բուլղի, ո՛չ մէկ կուպէկ զրուած է իզմիրլեանի: Իսկ ակնարկուած նպատակներուն համար բնի՞ն մը անգամ ծախսուած չէ: Այլ ահազին գումարէն, զոր ազգին վաստակութիւնը նուիրած է վեհարանին, հազիր 10,000 բուլղի ծախսուած է միայն՝ Էջմիածնի մէջ թանգարան մը շինելու, բարձրակրթ անպէտ ու ախոսանման, ու ան ալ պարզապէս ժողովրդին աչքին բան մը ցուցնելու համար: Չեղծութիւնը այնքան ակնեղեւ կն որ նոյն իսկ Սինոդին պրօկուրօրը ստիպուեցաւ բողոք բաժնալ եւ պահանջել որ դանձապահ վահան վարդապետը գատաւ տանի բաշտի, բայց Կաթողիկոսը համամիտ չգտնուեցաւ: Հիմա ալ բնութիւն կը կատարուի սուս կառավարութեան կողմէ: Անշուշտ, Սինոդին տրամադրութեան տակ զրանուզ գումարները, պրօկուրօրին հսկողութեան կնթարկուած ըլլալով, չեն կրնար յափշտակուիլ, թէեւ հոգ ազեղծութիւն կատարուած են ու կը կատարուին գանձապահներու կողմէ: Անցազակի, տարօրինապէս թեղազրուական չէ՞ այս տեսարանը թէ ճշգիր այն հատուտութիւնն է, որուն գէմ կ'ընդլզի մեր ազգային-եկեղեցական ի՞նչ նորինութեան իրաւունքի պահանջը, որ իր իշխանութեամբը ու հսկողութեամբը բիշ շատ կանոնադրութիւն կ'ապահովէ Էջմիածնի մատակարարութեան մէկ զլխաւոր բաժնին մէջ: Կը յիշենք նոյնպէս թէ մէկ-բանի տարիէ ի վեր Կ. Պոլսի պատրիարքարանին ուսումնական խորհուրդները շատ ափսոս չեն թիրք կառավարութեան տնօրինութիւնն որ կը ստիպէ հայ ուսուցիչները՝ հայ վարկարաններուն մէջ պաշտօն վարել կարենալու համար՝ վկայաչիւր մը ունենալ պատրիարքարանէն, — տնօրինութիւն որուն շնորհիւ ուսումնական խորհուրդը իշխանութիւն կ'ունենայ հայ վարժարանները փակելու կարգ մը ապիկար ու պանդոյր ողորմելիներու առջեւ որոնք մինչև հիմա, ապրուստի սէ է միջոց գանել յուսահատած, թաղականի մը կամ հոգաբարձուի մը ակնարկութիւնը ու ապուշ անձնասիրութիւնը լըւրբոսելով՝ վարժարաններու մէջ հայ մանուկները անբանացնելու պաշտօն մը կը ստանային: Երբ մէկ կողմէ մեր պահանջումները կը ներկայացնենք, գիտնանք զոնէ, միւս կողմէ, մեզի թողուած իրաւունքներով չզեղծանիլ:

Դաննալով Էջմիածնի գանձարանին, խնդիրը այն հարիւր հազարներով բուլղիներուն մասին է որոնք 1893էն ի վեր վեհարանը մտած են եւ որոնց մասին ոչ մէկ հաշիւ տալ կ'ուզեն, այլ կը շատանան ժողովուրդը խաբելով խորհրդաւոր ակնարկութիւններով:

Ահա՛ ճշմարիտ կացութիւնը: Ինչպէս կը տեսնուի, վարդապետն ըլլալէ շատ հետի է: Ու ասիկա սղորալի է: «Փտած բան մը կայ... Վաղարշապատ» կրնանք գոչել մենք ալ այսօր: Էջմիածինը, որ բոլոր հայ սրահերը աւելի եւ աւելի սերտ կապերով պէտք էր իրեն կապեր, իր կացութեամբը իրմէ պաղեցնելու վրայ է նոյն իսկ ամենէն խանգալաւանները, նոյն իսկ անոնք որ քիչ շատ համակերպած են հոն շտանելու այն բանիմաց, աշաւորջ, արթնամիտ ու հանրօգուտ գործունէութիւնը որ պէտք էր իրը ըլլար, հիմակ մանաւանդ երբ ազգին վստահութիւնը լիարուտն անոր կ'ընձեռէ գործելու ամէն միջոց: Բայց երբ փոխանակ ասոր հոն կը տեսնենք ճշմարիտ ապականութիւնը մէկ կողմէն ու թոյլ ու մեղի անհոգութիւնը միւս կողմէն, երբ կը տեսնենք այնպիսի գայթակղական վիճակ մը որ գոյութեան մասին նմանօրինակ կասկածներ ու լուրեր ինքնին առաջ կուգան, այն տան բարձրաձայն կ'ազաղակենք որ՝ վառնոց կայ: Էջմիածինը ազգինն է, անբողջ ազգինը, ու պէտք չէ որ կարճ մը շահամուտ արդարակներու սեփհականութիւնը գտնայ, որոնք անարգին անոր սրբութիւնը, եւ անարգել ու անպատիժ՝ ազգին խղճմանըք ու գիտակցութիւնը անգոտնեն հոն:

Ա՛հ, եթէ կաթողիկոսը ուղեր: Երբեք ժամանակը ուշ չէ արդարութեան գործին ձեռնարկելու, գարսանումներու անսղորք ու անհրաժեշտ թուական մը սկսելու: Ա՛հ, եթէ կաթողիկոսը կարենա՛ր:

Մեր վերջին կէս դարու պատմութեան մէջ կարելի չէ գտնել զէմը մը որ այնքան ժողովրդական եղած, այնքան պաշտում ու խանդավառութիւն առաջ բերած ըլլայ իր շարժը ու հետուն որքան Հայրիկը: Երբ ամբողջ ազգին ձայնը կոչեց զանի հայութեան արդի գերագոյն պաշտօնին, իրր վարձատրութիւն տարիներով հայ ազգային սղին յուզած ու հրահրած ըլլալուն եւ իր բողոք ընդդէմ թիւրք կառավարութեան՝ յանձին Հոյրիկի՝ Հայութեան առած խաշանդումներուն, հրճուանքի ու խնդութեան հեղեղ մը ուսկոցոց բոլոր սրահերը: Կուտն էր ան որուն ամէն սր կը նայէր ակնապիշ ու հիացկոտ, անհաշիւ ու անխնայ անձնասիրութեան սրացումներով, պատրաստ անոր գոյր թափելու ամէն կարելի զոհսպութիւն:

Էջմիածին մէջ նոր թուական մը կը բացուէր իր առջեւ: Երբ գործունէութիւն մը պէտք էր սկսիլ հոն, առջինէն տարբեր անշուշտ բայց անոր շափ կենտական ու հանրօգուտ: Ազգին Մեծ Տունը հանելու էր մթութեանն որուն մէջ կը մըլէր, մաքրելու սրբելու էր զիզացած ուղարտութիւնները, նոր կորով, նոր եռանդ մացնելու էր այդ մեծ մարմինն ընդարձացած երակներուն մէջ, որջացած անբարոյականութիւնը ու մօրաջամ սպականութիւնը լսանելու էր անկից՝ իխտ, անաշտ ու արդար ձեռքով մը: Լոյս պէտք էր հոն, մաքրութիւն պէտք էր հոն, առողջ խարսի մը որուն մէջ բոլոր փտութիւնները ու նեխութիւնները հալէին: Ո՞վ էր որ կաթողիկոսին զէմ պիտի ելլէր երբ որ ան ազգին կողմէն ամուր գատախաղ կանգնած՝ այս արդարութեան ու վերանորոգութեան գործը ի գլուխ հանելու ձեռնարկէր:

Այսօր, աւա՛ղ, կը հաստատենք վերջնապէս թէ ոչ միայն այդ ուղղութեամբ բա՛ն մը փորձուած չէ, հապա կաթողիկոսը — այն խնդուն սկեպտոսութեամբ որ տեսն մը իր յանկուցիչ հմայքն էր եւ որ հիմակ սակայն, իր պաշտօնին գլուխը, մեղապարտ անտարբերութեան մը հանգամանքը կ'անէ, — թող սուսած է իր շուրջը ծանրանալ

կացութեան մը որ առաջ գայթակղութիւն մըն էր ու հիմակ՝ բայքայում մը:

Մենք չենք սիրեր կուտերը վար անել իրենց պատուանդանէն, երբ մանաւանդ խորհրդանշաններ եղած են առանք որ ազգին սիրտը բարախել տուած են Լն վեհ ու Լն ազնիւ թափերով: Բայց, տեսէ՛ք, Կովկասէն, որ Հայերը ցաւած ու վիրաւորուած սկանաւաններ են, անգահութեան հոտանքը ընդդէմ Էջմիածին՝ հեազհեալ կը ծաւալի ամբողջ հայութեան մէջ: Եւ, ուշապրութիւն, այն օրը որ սրտտերը պաղին յիշատակներու ու միութեան այդ կեցրոնէն, այն օրը մեծ բան մը պոկտած պիտի ըլլայ ազգին հաւաքական այժէն:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՅԻՇԱՏԱԿ

Պանդուխտ էր ան. յաճախ կուտար կը նըստէր
Ու կը պատակը ինծի ցաւերը սըբտին.
Լըքեր էր ան կին ու գաւակ նորսմին
Եւ օրն ի բուն բըրանալատասակ կը գտտէր:

Մեր հայրենի երկրին վըբայ անուշակ
Հաղար զըբոյց եւ հաղար խօսք կը զըանար:
Կը բարբաւր մեղմիկ, սակայն հոգւով վատ,
Եւ էր տխուր մըպիտն իրբեւ յիշատակ:

Կը սիրէի զանի. տալով միտ աըբտում
Իր ծանրսխօս ձայնին՝ որ զիս կ'օրօրէր՝
Մեղմ հառաչմամբ կը մաղթէի լաւ օրեր,
Ազատ օրեր — ո՞վ խընդութիւն անպատում,

Երբ հայրենի գետնին վըբայ մենք նըստած
Հայաստանի հօտը պիտի վայելենք,
Նըբատս ծառայ, ըստրուկ պիտի չըլլանք մենք,
Պիտի շերթանք խորշ մը կըկզիլ աջօք թայց:

Օր մ'ան ըսաւ. Ահա նըբեր մը բերի
Հայաստանէն՝ որ գու կարօաը պանուս.
Որ մեղ յըղեն զըբեր էի բայբերուս
Արտաճեաու խընձոր՝ հասած այս տարի:

Մոցէն երկու խընձոր հանեց ան բընբուշ,
Կարծես խոյժամ արշալուսի աակ միայն.
Պըբաւդներու գեղեցկաբոյնն ամենայն՝
Կը բուրէին անմահական հոտ անոյշ:

Կիտեց եւ շերտ մ'ինծի աըբաւ. ան այսպէս
Կարօանօք բերանս առի ճաշակիլ,
Բայց թունդ էլաւ հոգիս ու լաց անարգել
Կաթիլ կաթիլ սկսաւ հոսիլ աըքերէս:

ՎԱՀՐՄ ՍՎԱՃԵԱՆ

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դ.

ՅՈՒՂԻՍ 15 Ի ՅՈՅՅԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Պատրիարքին թանձրամտութիւնը, և Ազգային վարչութեան ատենապետին թերհաւատութիւնը ժողովրդային շարժումի մը հնարաւորութեան մասին, անխուսափելի ըրին 1890 յուլիս 15 Ի ցոյցը: Գործնական Յեղափոխութեան թուականը բացուեցաւ այդ օրը Գում-Գարու:

Բարձր մը թէ շարիք մը այդ ցոյցը:

Պատրիարքի պաշտին վրայ պարտութեան յաջորդօր օրը յիմարները և մեղիները ձեռքերնին ծալլած կ'սլորան, պատապարտելով մէկը միւրը. խեղացիները և սրտասնները, ա՛լ եղածին վրայ առանց շատախօսելու, վազուանը կը մտածեն: Յուլիս 15 Ը գոյութիւն ունէր. ս'ի կրնար իբր «չեղեալ» հոչակել այդ օրը: Յուլիս 16 Ին թիւրքիոյ Հայերուն գրութիւնը ա՛լ չէր այն ինչ որ կը յուլիս 14 Ին: Յուլիս 15 Ը տիրապետող թիւրք իշխանութեան և ընկճուած հայ ժողովրդին հինգ դարու փոխադարձ յարաբերութիւններու սովորական ընթացքը ա՛լ անդարձ ընդհատելով ստեղծած կը նոր կացութիւն մը սրուն պայմանները քննելէ յետոյ անոր համեմատ հարկ կը նոր ուղղութիւն մը տալ ազգային գործերուն: Եւ ինչո՞ւ ողբալ. Գում-Գարուն պարտութեան պաշա մը չէր եղած մեղի համար. ընդհակառակը հոն պատրաստուած կը, ամէն տիկիալութեանէ դուրս, կուտան մը նպատատար հայկական բարեկարգութիւններու ուսնացումին:

Թիւրքիան, Երսոպան, հայ ժողովուրդը, ամենքն ալ յանկարծակիի եկան Գում-Գարուի ցոյցէն: Ասոնցմէ ոչ մէկը սակայն որոշ և ճշգրիտ զազափար մը կազմած կը հայկական շարժումին կազմակերպութեանը, իսկական ու կին, ձգտութիւններուն վրայ. բայց ամենքն ալ կ'առաջնորդուէին ենթադրութիւններէ, վախերէ, յոյսերէ որոնք աւելի նպատատար բան աննպատ կրնային գտնուիլ մեր գասին: Ստեղծուած այդ նոր կացութիւնը ամփոփեմ:

* *

Յուլիս 15 Ին իսլամներուն Գուրպան-Պայրամի տօնն կը. Կ. Պոլսոյ արուարձանները բնակող թիւրք պաշտօնեաները երբ նաւամատոյց իջան՝ շոյքնաւով աողին անդին շնորհաւարական այցելութեան երթալու, լռելով Հայերուն Գում-Գարու «սարի ելիլը»՝ իրենցմէ շատերը տուն վերադարձան: Այս վախը թէ և մասնակի երեւոյթ միայն համարուի բայց իսլամական շրջանակներու մէջ տիրող թաքուն մասնագութեան յայտարար մէկ նշանը կրնար նկատուիլ: Այդ մտահոգութիւնը հեռզհեռ աւելի հզօրացուց ևրեան եկաւ: Արդարեւ Հայերը շատ անդամ Պատրիարքարանին շարժը արժուէ յարուցած կին, բայց

զինուորական զօրութեան հասնելուն ժողովուրդը «Փատիշահիմ պին եաշա» ազգականերով ընդունելութիւն կ'ընէր սովորական զօրքերուն, ու կը հանդարտէր: Թրքական զօրքը յուլիս 15 Ին ըստ հնաւանդ սովորութեան նորէն երեւցած էր, բայց փոխանակ այս հնաւանդ սղջոյններուն նոյն անգամ գնաակով ընդունուած էր. ուրեմն ցոյցը չէր այն ինչ որ թիւրքերը սովոր էին որակել «Փատիշազ գավկասը» — տէրաւերի կոխ, կարեւորութեանէ զուրի: Գում-Գարուի ցոյցը հակահառափարական հանգամանք ունենալով իսլամները խորապէս յուզուեցան, մանաւանդ այն պատճառաւ որ մայրաքաղաքին մէջ իշխանութեան գլմ բրիտաններու շարժում մը տռաջին անգամն էր որ կը պատահէր. ու երբ այդ «պատահումը» կը կատարուէր Հայերէն, իսլամները անկարող էին ըմբռնել թէ զարեթ է վեր գլուխը կախ ժողովուրդ մը կրնար մէկէն ի մէկ կառավարութեան գլմ շարժելու յանգնիլ, առանց օտար պետութեան մը քաջալերանքին: Ու թիւրքերը իրենց գտն փորձառութեամբը սորված էին օսմանեան պետութեան մէջ շարժում ընող բրիտաններէն հանել բրիտանեայ պետութիւն մը գուշակել: Այս երկիւղին մէջ, ինչ սհատ իսլամներէն շատերը կը փափաքէին Հայերը գոհ տեսնել օտար կառավարութեան մը միջամտութիւնէն առաջ:

Ս վթանը իր թղանցքը համարելու եկող պաշտօնեաներուն ամբար կ'ընդունէր Տօլմա Պահճէի պայտար, երբ ականջէն վար փոփոսցին. «Հայերը Գում-Գարու ստրի ելան»: Ձեռքերը զողալ սկսան, գունաթափեցաւ, ու հանդէսը կարճ կապելով փութաց Երլարը փախչիլ: Կ. Պոլսոյ մէջ հայկական շարժում մը անսպասելի ըլլալով սուլթանը մէկէնիմէկ շուարած ահաբեկեցաւ: Երբ Երլարը պալատը մտաւ իր տաշին ազազակը եղաւ. «Լրտեսներու համար այսքան օսի վատնուի ու գարձեալ կարելի չըլլայ նախապէս իմանալ քանի մը հազար հայու միաբան հաւաքումի և արշաւանքի որոշումը»: Բնական էր որ սուլթան Համիտ շատ վախնար Հայոց երեւան բերած այս գաղտնապահութեանէն. ս'չ սպաքէն Հայերը կարող էին ուղղակի իր վրայ յարձակիլ, ու լրտեսները մնային անզիտակ: Նստե իսլամական տեսակէտներով ալ սուլթանը խոտովեցաւ. Հայերուն օրինակը արդեօք վարակիչ պիտի չըլլա՞ր թիւրքերուն. երբ ջախջախուած բայան պուխ կը վերցնէ, իսլամը իր անձնատիրութեանը մէջ պիտի չի գրգռուի և իրեն ամօթ պիտի չի համարի՞ ձեռնպահ հանդիսատես մնալ երկրին վատթար վարչութեանը, մինչ բրիտանեան կը կուտի իր վիճակը բարւորելու համար: Միւս կողմէն՝ Մուսայի գաար և Էրզրումի ջարդը Երսոպայի հանրային կարծիքին վրայ արդէն շատ վատ ազաւորութիւն ըրած ըլլալով սուլթանը կասկածեցաւ որ Գում-Գարուի ցոյցը պետութիւններէն ումանք կրնային միջամտութեան մը առիթ համարիլ. մնաց որ, այդ վախը շատով իրականութեան կերպարանք սկսաւ առնել: Սուլթան Համիտի հոգեկան այս ահաբեկ վիճակէն պէտք էր օգտուիլ զիրարցնելու համար բարեկարգութիւնները, գնն, մասամբ:

Թիւրք նախարարներուն մէկ մասը երկրին ընդհանուր կացութեան բարւորումին նպատատար համարեց

Գում-Գաբուի ցոյցը: Նախարարութեան պիտուր ան-
 զամենքն մէկ քանին կը պատկանէին այն զարրոցին
 — շատ սակաւաթիւ սակայն — որուն յոյսը, օսմանեան
 պետութեան փրկութեանը համար, բարեկարգեալ վար-
 շութեան մը վրայ էր, եւ որուն համոզումով՝ առանց եւ-
 րոպական ազդեցութեան ո՛ր եւ է բարեկարգութիւն սպա-
 սել ներքի չէր: Ռուսելութիւնը պատերազմէն ետքը Սով-
 ֆէթ փաշա իրեն մտերիմ՝ Հայու մը յայտարարած էր.
 «Եւրոպական գաշնագիրներու զօրութեամբ հայկական
 բարեկարգութիւնները պարտաւորիչ ընելը մեր երկրին
 փրկութեան պայմաններէն մէկն է: Մեր սուլթանները ի-
 րենք իրենց երբեք ո՛չ պիտի ուզեն ո՛չ ալ պիտի կրնան
 օրինաւոր վարչութիւն հաստատել: Գոնէ Հայերուն պատ-
 ճառաւ բարեկարգութիւնները ներմուծուին եւ ընդհանրա-
 նան բոլոր երկրին. այս նկատումով էր որ նախարարները
 թէ՛ Սան-Սթէֆանոյի եւ թէ՛ Պերլինի գաշնագիրներուն
 մէջ Հայոց նպատաւոր տրամադրութիւնները զիւրացնե-
 լու հակամիտեցան:» Ստորագրումը 1890 ին Քեամիլ
 փաշան էր. կը յուսար որ Գում-Գաբուի ցոյցը կրնար
 ոչ միայն զիւրացնել բարեկարգութիւններու զօրծաղու-
 թեան խնդրին բռնուով այլ եւս ասով Դրան վերագոր-
 ձնել գոնէ մաս մը այն իրաւունքներէն զոր Եւրոպացի
 զամ էր Գոնէն:

Եւրոպայի հանրային զգացումին վրայ Գում-Գաբուի
 ցոյցը հզօրապէս ազդեց ի նպաստ Հայերուն: Հայ ժողո-
 վուրը սխարաբարոյ կը համարուէր եւ ահա յանկարծ
 կատարի երեւցաւ: «Հայերը կատարած ոչխարներու պէս
 կը կուտին Գում-Գաբու. ե յայտնի է թէ ամենէն վտան-
 գաւոր կատարութիւնը ոչխարներունն է» կը զրէին եւրո-
 պական թերթերը: Բարիզի կէս-պաշտօնական «Թան»ը
 ընդհանուր տպաւորութիւնը ամփոփեց հակիրճ բանաձեւի
 մը մէջ որ ճշմարտութիւն մըն էր եւ ճշմարտութիւն մնաց.
 «Հայերը խոհեմ են ու յարատեւող, ըսաւ «Թան». ան-
 դամ մը որ այս յանգուզն քայլը առին, ա՛լ պիտի շա-
 րունակին:» Կ. Պոլսոյ զեսպանական մարմինն ալ զգաց
 թէ մեծ քայլ մը առնուած էր յուլիս 15ին. հայ ժողովուր-
 րը Արեւելեան խնդրին մէջ ասկէ ետքը ուղղակի պիտի
 միջամտար եւ պիտի ներգործէր զէպեբրուն վրայ: Այս կաս-
 կածները զօրաւոր էին մանաւանդ Երրեակ-Նիզակահցու-
 թեան զեսպանատները որ հայկական շարժումը ռուսական
 զրդուի կը վերագրուէր, արեւելեան խնդրը բանալու
 նպատակով: Էրզրումի ջարդը եւ անմիջապէս անոր յա-
 ջօրող Գում-Գաբուի ցոյցը ուժ կուտային այս կասկած-
 ներուն որոնք, ինչպէս ետքէն պիտի տեսնենք, սկսան
 ներգործել ի նպաստ մեզի զեսպանական միջամտութեան
 վրայ: Յուլիս 15ի ազդեցութիւնը այնքան հզօր եղաւ Եւ-
 րոպայի մէջ որ սուլթանը աճապարեց 50,000 օսկի խրկել
 Բարիզ հայ պաշտօնէի մը ձեռքով, մասուլին վրայ ազ-
 դելու նպատակաւ:

Յուլիս 15ը խանդավառեց հայ ազգը: Նախ Պոլիսը
 հանդիսացաւ ազգային ցնծութեան թատերաբեմը. ամէն
 Հայու զէմբին վրայ կը ցոլար իր ներքին հրճուանքը.
 Հետզհետէ մօտակայ գաւառներէն կը ժամանէին ժողովր-

դին ուրախութեան աղաղակները. ետքէն երկրին ներսե-
 րէն, Եւրոպայի Հայերէն, Կովկասէն, Ամերիկայէն. խըն-
 դութեան նուագահանգիւս մը ամբողջ Հայութեան կողմէն:

Ինչո՞ւ զգացումներու այս յանկարծակի պոռթկումը:
 Անհատներու պէս ազգերն ալ սիրտ մը ունին որ տը-
 բամբաւնել չի գիտեր երբ կը բարախէ. յուլիս 15ին Հայու-
 թեան սիրտը բարախած էր:

Տկար արդարէն զօրաւոր անիրաւին գէմ մզուած պա-
 րերազմը կրնայ անխոհեմութիւն համարուիլ, գուցէ եւ
 յիմարութիւն ալ, բայց ապահովապէս հասարակ գործ չէ.
 ու կը ներկայանան կացութիւններ որ խոհեմութիւնը ա-
 լելի փնասակար է քան թէ անխոհեմութիւնը: Հայ ժողո-
 վուրը 1890ի առաջին կէսին իր պատմութեան ծանր
 մէկ ճգնաժամին մէջ կը գտնուէր:

Քսան տարիէ ի վեր հայ ժողովուրդը նոր գաղափարի մը
 յառած կը մնար. աշխարհակալող թիւրք. ցեղին իր կեան-
 քին եւ ստացուածքին վրայ անսահման «իրաւունքը» այլ
 եւս չէր ուզեր ճանչնալ: Հայ ազգին այս տրամադրութիւ-
 նը երեւան եկաւ խրիմեանի պատրիարքութեան օրով հա-
 բստահարութիւններու ջնջումին պաշտօնական պահանջու-
 մովը: Ինչ որ մենք «հարստահարութիւն» կ'որակէինք,
 «իրաւունքներու զօրծաղութեան եղանակ» էր մեզի աշ-
 խարհակալող ցեղին համար: Թիւրքը տիրելով Հայաս-
 տանի, անոր բնիկներուն կեանքին եւ ստացուածքին բա-
 ցարձակ սէրը համարած է ինքզինքը. Հայուն կեանքէն
 եւ ստացուածքէն ինչ որ կը թողու, անոր «շնորհ» մը ը-
 րած կը համարէ: Հարստահարութիւնը ուրեմն «իրաւունք»
 մըն էր եւ հարստահարուիլը՝ «պարտականութիւն»: Բայց
 եկաւ օր մը որ Հայը այս «պարտականութիւնը» այլ եւս
 ճանչնալ չուզեց, կամ աւելի ճիշդ՝ Հայը իր իրաւունք-
 ները պահանջելու ժամը հասած կարծեց: Տիրապետող
 թիւրքը տկարացած էր. մեր վրայ տիրող իշխանութիւնը
 ի՛նչ աստիճանով որ կ'իյնար, նոյն համեմատութեամբ ալ
 մենք կը բարձրանայինք, ու եթէ ոչ նիւթապէս գոնէ բա-
 րոյսապէս հաւասարակշռութիւնը հաստատուած էր տիրո-
 զին եւ տիրապետողին միջեւ, մինչեւ այն օրը որ բարոյա-
 կան գերակշռութիւնը մե՛ր կողմն էր: Երբ ինքզինքնիս զօ-
 րաւոր զգացինք, բնական էր որ բիրտ ուժին ձեռքէն խլել
 ուզէինք մենէ յափշտակած իրաւունքները: Թիւրքը ա-
 փերը պինդ փակած էր ու մենք կը տքնէինք զայն բանա-
 լու: Պաշտօնական կոիւր, 1870ին սկսած խրիմեանի
 պատրիարքութեանը, բոսն տարի է կը շարունակուէր գա-
 նազան երեւոյթներու տակ, երբեմն ընդհատումներով,
 մերթ յետադարձերով, բայց միշտ յարատեւութեամբ:

Խալամական զգացումին եւ գաղափարներուն իբր ներ-
 կայացուցիչ, սուլթան Համիտ ըմբոստացաւ «բայա» Հա-
 յուն իրաւունքի այս նոր ըմբռնումին գէմ: Հայկական
 պահանջումը կը ջնջէր սուրին հաստատած «իրաւունքը»,
 ու կը վտանգէր թրքական գերիշխանութիւնը որուն տես-
 կանութիւնը ցեղային անսահման բռնապետութեամբ մի-
 այն ապահովեալ կը կարծուի: Խալիֆը ուզեց զօրծնական
 եղանակով ամբաստնել խալամութեան «անկապտելի իրա-
 ւունքներուն» քայքայուող գաւառները: Մուսայի դատաս-
 անանովը պաշտօնապէս յայտարարեց թէ իւրամ ժողո-

վուրդը պէտք է շարունակէ քրիստոնեան իր սեփականու-
թիւնը համարել, երկրին կառավարութիւնը իրեն զօրա-
վիզ ու պաշտպան ունենալու վստահութեամբ: Էրզրումի
շարքովը ծանուց թէ իսլամ իշխանութիւնը կը յարատեւէ
քրիստոնէին վրայ կեանքի եւ մահու բացարձակ իրաւունք
վայելել առանց ո՛ր եւ է պատասխանատուութեան:

Թիւրքին եւ Հայուն միջեւ ազգային գոյութեան մա-
քառումի պահուն հայ ժողովուրդը իսլամական յաւակնու-
թեան պէմ առանց բողոքի ձայն մը լսեցնելու կոտոր պաշ-
տէն ետ քաշուելով, իր ստրկութեան պարտականութիւնը
նուիրագործած պիտի ըլլար: Յուլիս 10ին եթէ պատրի-
արքը բողոքատեան հրամարականը Երլազի պալատը
յանձնէր՝ կրնար կացութիւնը փրկել, պաշտօնապէս ա-
խոյեան կանգնելով ազգային արդար պահանջումներուն,
բայց այդ եկեղեցականը ո՛չ Հայութեան նոր ոգին էր ի-
մաստասիրած, եւ ո՛չ ալ Հայուն եւ Թիւրքին ժամանակա-
կից փոխադարձ ձգտումներուն վրայ զազափար կազմած,
ուստի համակերպութեամբ դուրս ելաւ Երլազէն: Հայկա-
կան իրաւունքի զրօշակը զոր Հայոց պատրիարքը չկրցաւ
ձեռքը բռնել, Յեղափոխութիւնը գայն վեր բարձրացուց ու
առաջ նետուեցաւ: Հայ ժողովուրդը հակաթրքական կռի-
ւէն խուճապական փախուստով ետ նահանջելու վստահին
փրկուած էր: Ահա թէ ինչո՛ւ Հայութեան սիրար բարբախեց
յուլիս 15ին:

* * *

Երեսփոխանական մարմինն ընտրուած պատրիարք մը
եւ երկու ժողով կը անօրինակ Թիւրքիոյ Հայոց վարչա-
կան գործերը եւ կը միջնորդեն Ազգին ու Դրան միջեւ:
Կառավարութեան հետ իր քաղաքականութեան մէջ Պատ-
րիարքարանը արտաքին ճնշումէ ազատ կը շարձէր. իր
այս անկախութիւնը չափաւորուեցաւ յուլիս 15ին, վստի
սահմանադրականին քով նոր իշխանութիւն մըն ալ երեւ-
ցաւ, ազգին ցաւերէն բղիւսած:

Կ. Պոլիս Հայոց Պատրիարքութիւն մը հաստատուե-
լէն ի վեր անոր պաշտօնավայրը պարբերաբար խռովու-
թիւններու կեդրոն կը դառնար. ժողովրդին պահանջում-
ները սակայն կրօնական կամ վարչական շրջանակներէ
անդին չէին անցնէր. իսկ յուլիս 15ին ժողովրդային բու-
ղոքարկութեան առարկան սուլթանին քաղաքականութիւնն
էր ուղղակի: Նորութիւնը աննշան երեւոյթ չէր եւ պէտք
էր գայն հետաանա աչքով քննել:

Խռովութիւնները առեւտրէ կը կատարուէին ժողովրդ-
ային համախմբումներով. պատրիարքի փոփոխութեամբ
կամ ուրիշ պահանջումի կարգադրութեամբ, հանդարտու-
թիւնը կը վերադառնար: Հիւսա շարժումը կազմակերպուած
էր կանոնաւոր մարմնէ մը սրուն անխտիր կ'անդամակցէին
հայ ժողովրդին զանազան պասկապները, բնակարան
հետ վաճառականը, ուսանողին հետ վարձակաւորը, զրա-
զէտին հետ զբաշարը, բռնաբերին հետ վարպետը: Այդ
մարմինը որոշ նպատակ մը ունէր, — Հայոց իրաւունք-
ներուն պաշտպանութիւնը, ու ազգային հիմնարկութիւնն-
բու կարգը անցաւ ստանալով պաշտօնական անուն մը.
Գում-Գարու արիւնի մկրտութեամբ անուանուեցաւ Հնչակ-
եան Կուսակցութիւն:

Ժողովուրդը միեւնոյն ատեն թէ՛ այդ մարմինն գոյու-
թիւնը իմացաւ, թէ՛ անունը լսեց, թէ՛ գործը տեսաւ: Ա-
նոր իրական զօրութեանը վրայ որոշ գաղափար չունէր,
իր երեսակայութեան յղացումներովը բազմապատկեց անոր
խսկական ուժը: Ինչպէս որ սեղանաւորական հրատարա-
կին վրայ վարկը հարստութեան անդ կը բռնէ, յեղափո-
խական ասպարէզին մէջ ալ կուսակցութեան մը վերա-
գրուած ուժը վարկ մըն է որ անոր ազդեցութեան հզօրա-
ցումին մեծապէս կը նպաստէ. ազգը առաջին օրէն այդ
վարկը շուրջեց Հնչակեան Կուսակցութեան:

Յեղափոխական գործող մարմին մը կրնար անգնա-
հասելի աշակից հանդիսանալ Պատրիարքարանին: Հա-
յոց պատրիարքները Գումը եւ Երլազի պալատը իրենց
ձայնը լսելի ընել աւելու անկարողութեան գատապարտուած
էին, չունենալով ո՛ր եւ է միջոց սուլթանին եւ նախարար-
ներուն վրայ ազդելու համար: Նոյն իսկ մեծ ազդերու մէջ
քաղաքագէտ նախարար մը սրբան ալ սաղանդաւոր ըլլայ
բայց եւ այնպէս ջլատուած կը մնայ առանց հզօր բանա-
կի մը վրայ յուսադրութեան: Հայ ազգին Դրան հետ
յարաբերութիւններուն մէջ Պատրիարքարանը մեր արտա-
քին գործերու պաշտօնատունն է, սրուն պետը, պատրի-
արքը, ինչքան ալ յանդուսն ըլլայ, ուրիշ բան չի կրնար
ընել բայց եթէ ծանուցադրեր իր կեղծ. շա՛տ շա՛տ կը հրա-
մարի: Այդ հրամարականը ազդեցութիւն կ'ունենայ միայն
այն ատեն երբ անոր ետին ժողովրդային շարժումի մը
օգնութիւնը զգացուի, ինչպէս պիտի ըլլար յուլիս 10 ին:
Գում Գում-Գարուի ցոյցէն ետքը Պատրիարքարանը պէտք
էր դադանաւել համաձայնը Հնչակեան Կուսակցութեան
հետ, որով միայն կրնար իր պահանջումները ազդուապէս
ներկայացնել սուլթանին ու նաեւ վեց պետութիւններուն:
Մերժողական պատասխանի պարագային յեղափոխական
ուժը կը շարժէր: Քաղաքական ժողովը որ 1889ին ընտ-
րուած էր կը բաղկանար ուղղամիտ եւ անշահախնդիր
անձերէ, բոլորովին զերծ Դրան ազդեցութենէն, ուստի եւ
կը վայելէր վստահութիւն: Իէպէտը իրարու ժամացուցած
էին պատրիարքական վարչութիւնը եւ յեղափոխական
կազմակերպութիւնը: Պատրիարքարանի վարչապետը հե-
տեւելով աւանգամուլ քաղաքականութեան մը շուրջ օլ-
տուիլ ներկայացած բարեգէտ սովթէն որ այնքան բեղմնա-
ւոր պիտի ըլլար հայ ազգին համար: Նորէն ուրեմն երկու
իշխանութիւնները առանձինն առանձինն պիտի գործէն
առանց միօրինակ յատակագծի մը, ու մենք եղելութիւն-
ները ինչքան կարելի է համաստեղալ ներկայացնենք:

* * *

Գում-Գարուի ցոյցէն ետքը պատրիարքին պաշտօնա-
վարութիւնը այլ եւս անկարելի համարուելով Ազգեան
Խորէն պատրիարք հրամարական իր կեց թէ՛ Ազգային
ժողովին եւ թէ՛ սուլթանին ու քաշուեցաւ Մարքի գիւղ իր
բնակարանը. միեւնոյն ատեն Կրօնական ու Քաղաքա-
կան ժողովներն ալ զազրեցուցին իրենց նիստերը, եւ
պատրիարքարանը փակուած կը համարուէր: Բարեբաղ-
դաբար յուլիս 15էն ետքը նոր կացութիւնը վարձեալ շատ
նպատաւոր կ'երեւար պատրիարքական հրամարականը
հայ ժողովրդին շահերուն համաձայն լուծելու առաջա-

գրութեան: Յոյցին ապաւորութիւնը, անստոյգ վիճակի մը երկիւղը, յեղափոխական գործունէութիւնը, յունական խնդիրը կը միանային սուլթանը նեղ գրութեան մէջ ձգելու: Երբաբար եւ պատրիարքարանի միջեւ նորէն կը սկսէր հնարավոր մարտում մը, որուն մէջ սուլթանը իր բարձր ճարտիկութիւնը ի գործ պիտի գնէր սչնչացնելու համար Հայոց նպատաւոր պայմանները. Պատրիարքարանը իր սղղավիտ հաստատամտութեամբը միայն պիտի կրնար սչնչացնել սուլթանական վարպետութիւնները:

Երբ սուլթանը ստացաւ Աշըգեան խորէն պատրիարքին հրաժարականը, անմիջապէս որոշեց զայն ետ առնել սալ որչափ կարելի է կարճ ժամանակամիջոցի մը մէջ, առանց սակայն ո՛ր եւ է գրական զոհացում ապու պատրիարքին պահանջուեցնելու: Պատրիարքին հետ բանակցելու եւ զայն իր պաշտօնին վերագարձնելու համար սուլթանը նշանակեց յանձնաժողով մը զոր կը կազմէին արտաքին գործերու խորհրդական Տատեան Արթին փաշա, սուլթանին անձնական զանձուն նախարար Յակոբ փաշա, և գետական գործերու խորհրդական Վահան Լֆէնտի: Այս յանձնաժողովը ամէն օր նիստ ընելով հրաժարեալ պատրիարքին հետ միասին կը քննէր անոր պահանջուեցները, զիջողութիւններ կը պահանջէր, պայմաններ կ'առաջարկէր. բայց Աշըգեան պատրիարք արտակարգ յամառութեամբ ընաւ սեղի չէր ի տար եւ ոչ մէկ կէտի վրայ. «Լերան արջը խօսք չէր հասկնար.» այնպէս որ կա՛մ պէտք էր Հայոց բոլոր ինչպիսիքը վերջնապէս լուծել, կա՛մ պատրիարքին հրաժարականը ընդունիլ: Սուլթանը ո՛չ այդ զոհացումը կ'ուզէր տալ, ո՛չ այդ հրաժարականը ընդունիլ: Պատրիարքը սերեմ կը մնար կացութեան ալըր. մեր պատմութեան համար մեծ բույլ մըն էր սեռնել այդ խորամանկ ու զօրեղ — զոնէ անգին ազգի մը գեմ — սուլթանը որ վեղարը գլուխը պարզ եկեղեցականէ մը շատ նեղ եւ անտանելի կացութեան մէջ կ'իյնար: Զգա՞ց այդ օրը Աշըգեան իր սեղը. անգիտակից ընդդիմադիր մը հանդիսացաւ թէ խորհող:

Թէ՛ արտաքին ճնշումը, թէ՛ ներքին ծանր ինչպիսիքը սուլթանը տաքնապալից վիճակի մէջ ձգած էին:

Յուլիս 15 ի ցայցը անապատելի էր իրեն, անկէ ի վեր միշտ ահուզողի մէջ անոր յանկարծական կրկնութենէն կը սոսկար. այդ վախը այնքան սաստիկ սիրած էր իր հողիին որ երբ զինուորական ատենանը մահուան գատապարտեց Գուս-Գարու ձերբակալուողները, սուլթանը այդ պատիժը բերդարդելութեան փոխեց, ու այս առթիւ պաշտանապէս ծանուց թէ «այդպիսի զեպքի մը կրկնութեան «պահուն սուլթանը այլ եւս ներսպամիտ պիտի չի գանուի, «եւ սահմանուած պատմին անփոփոխ գործադրութիւնը «պիտի հրամայէ:» Այս ազգարարութիւնը վեր կը հանէր սուլթանին թաքուն երկիւղը որ պալատի զբոյցներէն ազգէն հասած էր շատերուն ականջը:

Յուլիս 15 ի ցայցէն ետքը Հնչակեան խորհրդական մարմինը Կ. Պոլսոյ վեց զեպաններուն շրջաբերականով մը բացաարեց ցայցին կարեւորութիւնը, և ինչպէս բարե-նորագումներու գործադրութեան համար իրենց միջամտութիւնը, հակառակ պարագային Պոլսոյ մէջ ամենամանր

զեպքերու հաւանականութիւնը զգացնելով: Այս շրջաբերականները Բարիզ խրկուելով անկէ ուղղակի Պոլսոյ գեսպանաները գարձուեցան: Սպանալիքը կնիքարտական չէր. ճարտարօրէն շինուած հրազէն ու բուսական քանակութեամբ ուժը պատրաստ կը գտնուէին Պոլիս, ի հարկին օգտակարապէս գործածելու զիտաւորութեամբ: Աստուրք երկու ամիս վերջը ոստիկանութեան ձեռքը անցան:

Երբ այդ շրջաբերականը Պոլիս հասաւ, Աւստրիոյ զեպանը զայն Գուսը տանելով Երրեակ-Նիզակակցութեան կողմէ անգեց Հայոց պատրիարքին պահանջուեցնելու անմիջական գոհացում տալ: Միեւնոյն ատեն իտալական զեպանատունը Պատրիարքարանէն կը խնդրէր մանրամասն տեղեկագիր մը Հայաստանի հարստահարութիւններուն, ու մերժողական պատասխան կը ստանար: Պատրիարք ու վարչութիւն չէին ուզեր ըմբռնել թէ զեպանաները կրնան շահադրդուիլ հարստահարութիւններու եւ պատրիարքական հրաժարականի հարցերովը: Հնչակեան խորհրդական մարմինն անպատճառ մը երբ ուզեց Ազգային վարչութեան մէկ անգամին բացատրել պատրիարքական հրաժարականին զեպանանները ստացած կարեւորութիւնը, իր գեմը սեռաւ ժողովուն անհաւատ մը միայն:

— Երեւակայութիւն: Խաղեր են: Խաղիոյ զեպանանէն ալ մենէ հարստահարութիւններու տեղեկագիր ու զեցին բայց ճամբեցինը պայցին: Պարտ'պ բաներ են:

Աւստրիոյ զեպանատունը, ինչպէս վերեւ յիշեցի, շատ կը կասկածէր թէ այս բոլոր պատահածները, և զիս պատահելիքները, ուսական քաղաքականութեան ծնունդ են, ուստի եւ կը ջանար զոնէ շափաւոր զոհացումով մը հանգարտեցնել Հայերը, զեւարտութիւնները հարձիկ և ուսական խաղերը ի գերեւ հանել:

Կ. Պոլսոյ Յոյներուն վրդովեալ վիճակն ալ մեծ տաքնապի մէջ կը ձգէր սուլթանը: Միթիմոս պատրիարքը որ իբր ջերմ թրքասեր ընտրուած էր ու սուլթանին միշտ հաճոյակատար քաղաքականութեան կը հետեւէր, պարտաւորուեցաւ զիմել այնպիսի ծայրայեղութիւններու սրտնք հազիւ թէ սպասուէին օւր-լուսի եւ ամեն սթանդ թրքաբանաց պատրիարքէ մը: Այլ եւս չկարենալով տոկալ կատարական նենդութիւններուն որով օրժոտսըս եկեղեցիին բոլոր իր սուսները եւ տո անձնաշարհուեցները կը յափշտակէր, Պատրիարքը Սինոդին հետ միասին համաձայնութեամբ հրամայեց, իբր բրիտանականութեան գերաւոյն բողոքը իսլամական բռնապետութեան գեմ, Կ. Պոլսոյ բոլոր յունական եկեղեցիներուն փակուել: Հրամանը գործադրուեցաւ, ահեղ ապաւորութիւն մը իր հետ բերելով: Այլ եւս չէին հնչէր եկեղեցիներու զանգակները, մեռելները չէին անցնէր եկեղեցիներէն, հարսնիք չէր կատարուել. ամայութիւն կրօնական կեանքին մէջ, որ ազգային ու ընտանեկան կեանքն է միանգամայն: Աշխարհի ամէն կողմ յուզուեցաւ օրժոտսըսութիւնը. ու Եւրոպայի բրիտանութիւնը ապշած կը նայէր Կ. Պոլիս սը թիւրքիոյ կն կարեւոր երկու բրիտանեայ ազգերը միեւնոյն ատեն սուլթանին բռնապետութեան գեմ կ'ըմբռնանային:

Երկու Պատրիարքները իրենց ընակարանները քաշուած, երկու Պատրիարքները գործադու ըրած, զեպա-

նասները իրար անցած, բրիտանաց երկու ժողովուրդները յազնու սաքի վրայ, շարժումի նշանը երկու ազգերէն ամենէն խելօքէն արդէն արուած Գում-Գարու, սուլթանը շատ իրաւունքով ահարեկելու պատճառներ սենէր: Մինչ Գում-Գարու զինուորական հսկողութեան տակ էր, անդին մէկ կողմէն՝ Պէպէքէն մինչեւ Օրթագեղ, միւս կողմէն Ֆէնէր, ու նաեւ թաթաւա, նոյն վիճակին ենթարկուած էին:

Ու կը մտնար օգոստոս 19ը, սուլթանին գահակալութեան սարեգարձը. երկու Պատրիարքներուն միահագոյն բացակայութիւնը Երջարդի պաշտառն ամենամեծ նախատինքն էր որ պիտի ժայթքէր սուլթանին երեսը, եւ թիրբից բրիտանական պաշտօնական եւ հանդիսաւոր ցոյցը:

Այս ծանր վիճակին սուլթանը կրնար ճողպարիչ Հայոց եւ Յունաց գառները անշտանելով իրարմէ, արշիլելով հայկական եւ յունական աւելի սերտ մերձեցում եւ համերաշխութիւն: Ու պիտի հասնէր իր այս նպատակին եթէ միայն յաջողէր ետ աննել տալ Հայոց պատրիարքին հրաժարականը: Դեռ պահները յայտարարած էին թէ մինչեւ որ Հայոց պատրիարքը գահացում չստանայ իրենք սաստիպակն պիտի սնդակին իրենց պահանջութեան վերայ. ու այդ գահացումի ապացոյցը պիտի նկատէին Պատրիարքին վերադարձն իր տնօր: Աշըգեան խորէն պատրիարք այդ միջոցին արդիօք իր կոչումին մեծութեանը զիտակցութիւնը սենէր:

Սուլթանէն նշանակուած յանձնաժողովին բարձր ջանքերը կը փշուէին Աշըգեան պատրիարքին անդրդուելի կամակարգութեանը դէմ. օգոստոս 19ը կը մտնար եւ զեւ բան մը չէր եղած: Սուլթանը այս կողմէն յուսահատեցաւ, ու Տատեան Արթին փաշան կանչելով անոր հրամայեց իր գերագոյն ճարտիկութեամբը պատրիարքին հրատարականը ետ աննել տալ, մինչեւ օգոստոս 19, առանց սակայն ամենաթիմե զիջուութեան մը. ու Արթին փաշա զործին զուխը անցաւ, իրը հնազանդ պաշտօնայ: Ելաւ Մաքրի-զիւզ գնաց պատրիարքին սաքը, — մինչդեռ տառջ Պատրիարքը չըմբռնելով իր մեծութիւնը ինք կ'երթար յանձնաժողովին սաքը մինչեւ Երնի-զիւզ Յակոբ փաշայի բնակարանը: Բայց Տատեան փաշային ալ համազումները, ազաչանքները անօգուտ կը մնային: Աշըգեան զուխը անկած էր:

Կացութիւնը յուսահատական կ'երեւնար երբ մէկէն իմէկ Մկրեան Յովհաննէս քահանան յանձն առաւ սուլթանին փափագներուն համաձայն ազգել պատրիարքին վրայ. 300 սակիի գումար մը այդ եկեղեցականին արամազրութեան տակ դրուեցաւ:

Քսան տարիէ ի վեր Պարսիկացի Յովհաննէս քահանայ Մկրեանը ազգեցիկ զեր կը կատարէր Պալիս. երբեմն պատրիարքական փոխանորդ, միշտ ժողովական, կը զեղերէր ամէն պատրիարքներուն շարժը, ջանալով ամենուն հաճելի ըլլալ անոնց ստաւոր արամազրութիւններուն համակերպելով: Իր պարթեւ կազմուածքը, փառաւոր մօրուքը, զօրեղ ձայնը մեծապէս կը ներգործէն տկարներուն վրայ: Ազգային պատմութեան ու հնարարութեան սիրող,

լաւ հաւաքածոյներ սենի, ինչ որ տիպառու մըն է իրեն մինչեւ իսկ զբաղանդներու մօտեմտուելու եւ գրական յանձնաժողովներու անդամակցելու: Իմ գծած շրջանակէս գուրու է ներկայացնել զինքը այստեղ այնպէս ինչպէս է իրօք. բայց յիշեմ միայն քառասունի վաւը զոր գործեց 1896ին՝ իզմիրեանի պատրիարքութեան օրով: Կրօնական ժողովի անդամ էր. երբ Նուրեան էֆէնտի պատրիարքին եւ քաղաքական ժողովին տապալումը կը ծրարէր՝ հրահանգ տուաւ Մկրեան քահանային հրաժարական տալ Կրօնական ժողովին անդամակցութենէն սրպէս զի այդ մարմինը անկարողութեան դատադարտուի, եւ վարչութիւնը բացբայուած հոշակուի: Կրօնական ժողովը կը բաղկանայ 14 անդամէ. հիւանդութեամբ, պաշտօնով բացակայութեամբ 1896ին այդ թիւը իջած էր 8ի. զեւ մեծամասնութիւն. սակայն անդամներէն մէկը ծանր հիւանդ ըլլալով ժողովականները կը գումարուէին 7 անդամով: Երբ Մկրեան հրաժարականը տուաւ, ժողովը կարոնցոյց իր մեծամասնութիւնը. ուրեմն կրօնական ժողով չի կար, եւ օրովհետեւ անհնարին էր Ազգային ժողով գումարել պակասած անդամներու ընտրութեան համար, սուտի բնականաբար Քաղաքական ժողովը միայնակ կը մնար: Ու երբ Նուրմփաշա կրօնական ու քաղաքական ժողովները իր բնական հրաժարեց ու սպանալիքներով հրաժարեցոյց գանոնք, Մկրեանի հրաժարականին վրայ մասնաւորապէս շեշտեց «ի պաշտօնակիցներուն անվայել ընթացքին համարի չգտնուելու» գովեստին արժանացնելով զայն:

Վճռական օրը հասաւ. օգոստոս 16ի հինգշաբթին վերջին օրն էր Աշըգեան պատրիարքին որոշ պատասխանը ստանալու. Մկրեան քահանան անդադար կը վազվուտը Պէշիկթաշէն, ուր էր Տատեանի բնակարանը, Մաքրի զեղ ուր կը կենար Աշըգեան: Հինգշաբթի իրեկուն Աշըգեան պատրիարքը կրօնական եւ քաղաքական ժողովներու բարձր անդամները հեռադրով իր բնակարանը հրաւիրեց ուրբաթ առտուան համար: Այս հեռադրին բարձր քաղաքական լաւատեղեակ շրջանակէ մը հինգշաբթի զիշեր կը հաղորդուի նաեւ Հնչակեան կուսակցութեան խորհրդական մարմին, ինչորելով որ իրենց ազգեցութիւնը ի գործ դնեն պատրիարքը հաստատ պահելու համար իր հրաժարականին վրայ:

Կրօնական եւ քաղաքական ժողովականներու հետ նոյն զիշերը տեսակցելու ժամանակ չի կար. խորհրդական մարմինի կողմէն նշանակուած անդամ մը ուրբաթ առտու կանուխ կամուրջին վրայ երթալով կը սպասէր Գատը-զիւզի երկրորդ շոգենալին ուրիշ պիտի ելլեն Քաղաքական ժողովին անդամները: Նոյն պահուն Կրօնական ժողովին կարեւոր անդամներէն մին անցնելով կամուրջէն, Հնչակեանը որ մտերմական յարաբերութեան մէջ էր այդ անձնաւորութեան հետ, կը բացատրէ պատրիարքին հրաժարականին կարեւորութիւնը եւ կը խնդրէ որ իր ամբողջ ազգեցութիւնը զործածէ պատրիարքը հրաժարականին վրայ հաստատ պահելու համար: Այդ միջոցին Գատը-զիւզի շոգենալն ալ համնելով քաղաքական ժողովականները գուրս կ'ելլեն: Հնչակեան ներկայացուցիչը ընկերանալով Քաղաքական ժողովին ատենապետին անոր հետ

կը մտնէ շոյեկառք եւ մինչեւ Եւեթի-Գուլի կայարանը հեար կ'երթայ, մանրամասնօրէն պարզելով անոր կացութեան ի՞նչ ըլլալը, ու պատրիարքին հրաժարականին յարաանութեան հայ ազգին համար արտադրելիք մեծ օգուաները:

Հարկ կը տեսնեմ այդ խօսակցութիւնը համառօտել այս տեղ:

Պ. Ասեմապետը իր խօսակցին տեսութիւնները ու շոյիր մտիկ ընելէ յետոյ, կ'ըսէ.

— Տեսնենք ա՛լ ինչպէս կ'որոշենք. մեր գիտնալու բանն է:

— Սահակ էֆէնտի, կը պատասխանէ Հնչակեանը, յուլիս 15ի ցոյցէն առաջ ալ եկայ եւ բացատրեցի կացութիւնը. խօսքերուս հաւատք ընծայել գովաժակեցաք, ձեր միտքը զրածը ըրիք ու հեանանքը տեսա՛ք ինչ եղաւ. չուզեցիք զգալ թէ սոքերնուզ ասիք հրաբուրդի կայ. գուք եւ պատրիարքը, առանց սզելու, քանդեցիք այն օրը ըսքանչելի կացութիւն մը: Չեր սխալը դարմանուեցաւ. հիւստի ազգին համար շատ լաւ վիճակ մը ստեղծուած է, շանանք զայն ազգին օգտակար կերպով շահագործել, չընջենք այս պատեհութիւնն ալ. սուլթանը վախու մէջ է, Յոյները սոքի վրայ են, մենք գործելու պատրաստ ենք, Եւրոպա թէ՛ մեզի եւ թէ՛ Յոյները կը պաշտպանէ, նախարարներու մէկ մասը ինչպէս նաեւ պաշտականներէն սմանք բարեկարգութիւններու ներմուծումին փոփառող են. ու ամենուն աչքը յառած կը մնայ Հայոց պատրիարքին վրայ: Կացութեան տէրն է մեր Պատրիարքարանը: Ա՛լ այս ճգնաժամին ձեր գիտցածին եւ ուզածին պէս ընելու ժամը անցած է: Գիտցէք որ եթէ պատրիարքին հրաժարականը ետ առնել տաք ու խանգարէք այս կացութիւնը գուք անձնապէս պատասխանատու կը մնաք Յեղափոխականներուն առջեւ, եւ անձնապէս պիտի տուէք:

Այս յայտարարութեան վրայ վարչութեան ատենապետը կը ցնցուի, եւ տարակոյտի մատնուած, շուարեալ կը հարցնէ.

— Լա՛ւ, եթէ սուլթանը իր ներկայութեանը հրաւիրելով պատրիարքը ինչպէ՛ հրաժարականը ետ առնել, խօստանալով գոհացում տալ իր պահանջումներուն, ան ատեն ի՞նչ ընել:

— Սուլթանը ասանկ բան չընէր:

— Բայց եթէ ընէ՛. անշուշտ բան որ գիտեմ որ կ'ըսեմ:

— Լա՛ւ, ան ատեն ինչպէ՛ր որ իշ կերպարանք կ'առնէ: Մենք անգործնական ու տաք գլուխ մարդիկ չենք: Կ'ըմբռնենք թէ պատրիարքին անհնարին է ուղղակի սուլթանին բերնէն իրեն ուղղուած հրաւեր մը մերմել. ուղղակի նախապիւնք մըն է սուլթանին, եւ զեպանական շրջանակներուն մէջ անգամ տպաւորութիւնը շատ վե՛շ կ'ըլլայ: Երբ սուլթանը ինք անձամբ խօսք կուտայ, ան ատեն պատրիարքը կրնայ գործին գլուխը անցնիլ եւ համբերութեամբ սպասել որոշեալ ժամանակ մը: Այդ միջոցին յեղափոխական մարմինն ալ սպասողական վիճակի մէջ կը մնայ, կենդանութեան նշան չի տար, եւ կը սպասէ պայմանաժամին լրանալուն: Այն օրը նորէն կը տեսնուինք:

Բայց ապահով եղիք, սուլթանը պատրիարքը իր քով չի կանչեր:

Վարչութեան ատենապետը համոզուած եւ յուզեալ, իր խօսակցին ձեռքը կը սղմէ եւ կ'ըսէ.

— Այսօր պատրիարքին հետ Արթին փաշային կ'երթամ. վտա՛ւջ եղիք:

Շոյեկառքը Եւեթի-գուլէ հասած ըլլալով, կը բաժնուին իրարմէ:

Նոյն օրը ժամը ըստ թրքաց Ծին Ղալաթիա կը տեղեկացուի թէ պատրիարքը հեար ունենալով վարչութեան ատենապետը զացած է Արթին փաշային. բայց Միրեան Յովհաննէս քահանան ալ կարգին մէջ է եղեր: Անձկութեամբ կը սպասուէր այս վերջին տեսակցութեան ելքին: Նոյն գիշերը Հնչակեան խորհրդական մարմինը լուր կ'առնէ որ ամէն բան փճացեր է. պատրիարքը առանց սուլթանէն ընդունուելու, հրաժարականը ետ առած է երկու ամսուան համար: Արթին փաշա ո՛ր եւ է պատասխանատուութիւն չէ ստանձնած բարենորոգումներու երկու ամսուան մէջ դարձադրութեանը համար. պատրիարքին հարցումներուն պատասխանած է.

— Նորին վեհափառութեան կամքն ու հրամանները կը յայտնեմ միայն:

Նոյն գիշերը իսկ Երւստըլի պալատէն զեօպաններուն կը հաղորդուի Հայոց պատրիարքին հրաժարականը ետ առնելուն տեղեկութիւնը:

Յաջորդ օրը կ'իմացուին հետեւեալ մանրամասնութիւնները:

Կրօնական եւ ֆաղաքահան ժողովները Մաքրի-գիւղ նիստ ըրած ատենին երկու հաւատարմասի կը բաժնուին, կէսը՝ պատրիարքին հրաժարականը ետ առնել տալու կը միտի, միւս կէսը՝ հրաժարականին վրայ պնդուած կը պաշտպանէ. նոյն պահուն կը հասնի Ղալաթիոյ սեղանատրներէն Պ. Անտոն Հանեան, որ երեք ամիսէ ի վեր բացակայ գտնուած էր ժողովին նիստերէն եւ ա՛յ հրաժարեալ կը համարուէր. իր ձայնը կուտայ պատրիարքի վերադարձին, եւ այսպէս ահա մեծամասնութիւն մը կը կազմուի: Պ. Հանեան կացութեան վրայ տեղեկութիւն չունէր. Միրեան քահանային խորուելով եկած էր անոր ազգեցութեամբը:

Պատրիարքին ամենէն մեծ տկարութիւնը եղաւ իր հրաժարականին ինչպէ՛ր, որ ազգին համար ամենամեծ նշանակութիւնն ունէր, ժողովականներու սրուշումին կնթարկել: Պատրիարքը, իբր ազգային պաշտօնատար մը, կատարելապէս ազատ է հրաժարական տալու կամ չի տալու: Բայց մէկ ամսուան կոխը եւ գիմազրութիւնը խախտած էին իր յամառութիւնը, եւ փոխանակ ազգին օգուարը մտածելու, պատասխանատուութեան ազատիլ կը խորհէր, ապաստանելով ժողովականներու վճռին: Բայց եւ այնպէս Արթին փաշային ժողովներէն ճիգ մը կ'ընէ զըլտորումի զառիվայրին վրայ ինքզինքը բռնելու:

— Բայց, ա՛խ, ան Միրեանը, ըսին շատերը յետոյ: Շարաթ օր ֆաղաքահան ժողովականները, անսոց մերձատրները արգէն սկսած էին տառապիլ խղճի խայթով մը, եւ ինքնամիթարութեան համար կ'ըսէին.

— Այսօր սուլթանը առանձին պիտի ընդունի պատրիարքը, վազն ալ գահակալութեան տարեդարձին առ-

թիւ, ու իր գահունակութիւնը յայտնելով բերանացի պիտի կրկնէ ինչ որ Արթին փաշայի միջոցաւ խոստացած է:

— Կը սխալիք, ո՛չ այսօր, ո՛չ վաղը սուլթանը կ'ընդունի պատրիարքը. ա՛յլ լինցաւ. սպաննեցիք ամէն բան. սուլթանը կը յաղթանակէ, ըսուեցաւ իրենց:

Այ՛, պատրիարքը որ զեռ օգոստոս 16ին վախ ազուզ զօրութիւն մըն էր, օգոստոս 18ին արհամարհելի քանակութիւն մը կը գտնար: Ինքնապաշտպանութեան զէնքը իր անգութ թշնամիին յանձնող սղորմելիի մը վիճակին մէջ կը գտնուէր. իրեն հետ ազգն ալ վտանգած էր:

Օգոստոս 18ին շաբաթ օր «Մօնիթէօն Օրիանթալ» կը հրատարակէր հետեւեալ սեղեկութիւնը. «Հայոց պատրիարքը իր հրաժարականը ետ առած ըլլալով, Արթին գործերու նախարարը ծանուցագրով մը այս սեղեկութիւնը հաղորդեց վեց զեսպաններուն:»

«Արեւելք» օգոստոս 20 երկուշաբթի օրը այս լուրը փրանսերէն թերթէն թարգմանելով կը ծանուցանէր հայ հասարակութեան: Կարդալով այս հրատարակութիւնը, քաղաքական ժողովին անդամներէն ոմանք — ճիշդ ու ճիշդ այսպէս — երկու ձեռքերնին զլիւրնուն զարնելով զոչեցին:

— Վախ, ախոս, աս ի՞նչ էր եղաւ. մենք չգիտցանք թէ ի՞նչ կարեւորութիւն ունէր պատրիարքին հրաժարականը: Երեսէն պատրիարք ա՛յնքան հրաժարական տուաւ ու ետ առաւ, օ՛ր մը զեսպաններուն չծանուցուեցաւ: Երբեք Հայոց պատրիարքի մը հրաժարականին առթիւ ասանկ ազգաբարութիւն չէր եղած: Հիմա կ'ըմբռնենք ասոր կարեւորութիւնը:

Շատ ուշ: Կա՛մ շատ ուշ, կա՛մ շատ կանուխ. աս չէ՛ Հայոց դժբաղդութիւններուն մէկ մեծ պատճառն ալ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՇԽԱՏԱՆՈՑ ՄԸ

(Վերջին ատեններս հայկական հարցին Եւրոպայի գրողներուն ներշնչած էն նշանակալից ու նպատակայարմար գրութիւններէն մին է ապահովապէս Պառէսի մէկ յօդուածը զոր կը թարգմանենք ի ստորեւ: Իր քաղած սեղեկութիւններէն մէկ քանիին զեմ կարելի է առարկել անշուշտ, բայց հայ ազգայնութեան կազմութեան կամ, աւելի ճիշդ, վերստեղծման մասին իր տեսութիւնները ի մաստատարական ու ընկերաբանական թանկագին էջեր են ու պիտի մնան մեզի համար:)

Ռընան, որուն զեմ առարկութիւնները եւ նոյն իսկ ստեղծութիւնը անպակաս եղած են, այն աստիճան որ ստական կերպով յիշատակուի Բարիզի լրագիրներուն երկու երբորդին մէջ, Ռընան երսուն երեսնոց տեսարակ մը զբաժնէ սակայն որու մասին ամենքս ալ պիտի համաձայնէինք, եթէ ամենքս ալ կարգայինք զայն:

Իր 1882ի հրապարակախօսութիւնն է ատիկա սա նիւթին վրայ. «Ի՞նչ է ազգ մը»: Անոր մէջ կ'ընդլայնէ սա զազափարք թէ ազգ մը էսպէս կազմողը ո՛չ ցեղն է,

ո՛չ լեզուն, ո՛չ կրօնքը, ո՛չ գեանքուն ընթացքը եւ ո՛չ լեռներուն սղղութիւնը: Մարդերու մեծ կենակցութիւն մը, մաքուլ առողջ ու սրտով տաք, կը ստեղծէ բարոյական գիտակցութիւն մը որ կը կոչուի ազգ մը: Յորչափ այդ բարոյական գիտակցութիւնը իր ուժը կ'ապացուցանէ այն զոհողութիւններով զորոնք կը պահանջէ անհատին հրաժարումը յօգուտ հասարակութեան, օրինաւոր է, գոյութեան իրաւունք ունի:

Ահաւասիկ առողջ եւ վեհանձն գաղափարները որոնք պարծանքն են ֆրանսական ոգիին: Ահաւասիկ այն անսակէտը զոր ընտրելու ենք՝ գատելու համար կրեաւի եւ Հայաստանի հարցերը: Եւ ատիկա ոչ միայն Յեղափոխութեան ստաշալլած վարդապետութեան սրտմաբանութիւնն է, հապա նաեւ 1870ի պարսեալներուն (Ֆրանսացիներուն) պարտադրուած սկզբունքն է, եթէ չեն ուզեր իրենքզիրենք ուրանալ: Ռընան կը մղուի սա եզրակացութեան. Եթէ տարակոյսներ ծագին սահմանադրութեան մասին, ինչորի առարկայ եղած ազգաբնակչութեանց կարծիքը հարցուցէք: Անշուշտ իրաւունք ունին այդ մասին կարծիք ունենալու:

Բայց կը պնդեմ՝ այս կէտին վրայ (հիմնական կէտն է ատիկա զոր հարկ է ըմբռնել ու տարածել), երկու բան իրաւամբ ազգ մը կը կազմեն, այսինքն — հաւաքաբար յիշատակներու հարուստ ժառանգութիւն մը ունենալը, եւ միատեղ ապրելու հաւանութիւնը, փափա՛քը, անբաժան ստացուած ժառանգութիւնը արժեւորել շարունակելու կա՛մքը:

Ռընան մը, Լուի Մէնար մը ամենէն սրտայոյզ կերպով լուսաբանած ու արտայայտած են սա զօրեղ ըմբռնումը թէ ազգ մը, ինչպէս անհատը, արգասիքն է ճիշդութեան, զոհողութիւններու եւ անձուիրութիւններու երկար անցեալի մը. թէ նախնիքը մեզ ըրած են ինչ որ ենք եւ աստով իրաւունք ունին բաւանանքի առարկայ գտնուելու. թէ զիւցազնական անցեալ մը, մեծ մարդիկ, փառք, ահա՛ ընկերական զբաւաղուիլը որուն վրայ կը հիմնուի ազգային գաղափար մը: Ու այն հոյակապ զբեմն, «Արդի Գաղաքը», հեղինակը, Պ. ժան Իզուլէ, կը գրէ. «Երկու ոյժ կը վարեն աշխարհը. Գաղափարը եւ Մուրը: Սուրբ կրքերը կըրցած չէ տեւական բան մը ընել առանց Գաղափարին: Ո՞րն է Գաղափարին շօշափելի եւ մնայուն գործիքը: Գիտունին, իմաստասերին, խորհողին բե՛մը:»

Յոյն ազգայնութիւնը կազմողը անշուշտ ցեղը չէ, այնչափ դարերէ ու խառնուրդներէ ետքը: Իտէալ մըն է, հելլենութեան վրայ ունեցած հաւատքն է: Ու այսօր այդ պզտիկ ժողովրդին ուժը՝ այդ դասական գերազրդուած զգացումն է: Աթէնքի Համալսարանն է որ ազգային կրօն վը կը շինէ եւ աշխարհը կը վրդովէ:

«Հայ ազգին» կապը կազմող բանը սա է որ իր անգամները հասարակաց հալածանքներէ կը տառապին: Իրենց կը պակսի անցեալին մէջ «ուրիշներուն հետ բաժնելի փառքի եւ կարօսներու ժառանգութիւն մը» որ անգէտ Եւրոպային ականջներուն թնդալու չափ մեծ ըլլայ, ու իրենց կը պակսի նաեւ «իրագործելիք յայտագիր մը» մէջտեղ գնել:

Հայերը կ'աշխատին այդ գիտակցութիւնը, այդ ազգայնութիւնը ստեղծագործել: Անոնցմէ շատերուն համար, արդէն զոյգութիւն սննի տախիա: Օր մը մտայ այն սրբաւիպրերէն մին ուր այդ վեհ ստեղծագործութեան ձեռնարկուած է:

Աշխարհիս էս գեղեցիկ վայրերէն մին է ասիկա, Վեներտիկի կղզեակներուն մէջ, Ս. Ղազար: Այդ հրաշալի տեսարանները ծանօթ են. արեւը մարը կը մտնէ լուսաւորելով Ս. Մարկոսի եկեղեցիներուն զմբխները, սեւ կոնտրոնները կը յաճին արծաթագոյն ջրերուն վրայ, պալատները կ'երկարին Շալանիի ափունքը, ծառերը ու կանաչները հանրային պարտէզներէն ու Լիտայէն կը հակին Այրիակահնի մէջ, «Ողջոյն քեզ Մարիամ»ը կը հնչէ բոլոր հեռուոր զանգակահաններուն մէջ, առաջին աստղերը կ'երեւնան, ու այս ամբողջ գեղեցկութիւնէն թեթեւ սենոյ մը կը բարձրանայ:

Ահաւասիկ ի՞նչ կը տեսնուի Ս. Ղազարի կղզեակէն, մայրամուտքին: Բայց վանքին մէջ սր, իբր երկու գարէի վեր, Հանրապետութեան սոստաձեւումութեան շնորհիւ, հոգի այդ փոքրիկ կոտորը կը գրաւէ, այդ մեղի հեշտութիւններով չեն զբաղիր: Հայ վանականներ կը բնակին հոն սրտնք իրենց մէկ բանի հարիւր երկուսուսուր հայրենակիցներուն կրթութեանը նուիրած են իրենքզիրենք: Վարպետ ու աշակերտ, երեւակայութեամբ կ'ապրին Հայաստանի անհաւատար կլիմային տակ, այնքան սաք, այնքան ցարտ: Երազանքի ժամանակ չունին, աշխատութիւնն ահազին է: Ինչպէս ըսինք, այդ աշխատութիւնն է ստեղծել, պահպանել, կամ, եթէ կ'ուզէք, վերստին գտնել Հայ ազգութիւնը. եւ ասիկա պատիկ բան չէ:

Կը յիշէք «Երկրորդ Փաստ»ին տարօրինակ ու հզօր տեսարանը: Վախէր Քիմիադէաններուն հնոցին մօտ նոսաձ է: Մեքիսթիսթիսթիս, սր ներս կը մտնէ, կ'ըսէ. «Զուշտութիւն բրէք շունչերնուդ ու խօսքերնուդ: Հրաշալի գործ մը կատարուելու վրայ է:

— Ի՞նչ կայ սր:

— Մարդ մը պիտի ծնի:

— Մ'ա՞ր մը: Ուրեմն ի՞նչ սիրտտարի ամուր բան տարկիւմ էք ծինելոյզին մէջ:

— Բա՛ւ լիցի: Ստեղծագործելու հին եղանակը, մենք անիկա փուձ ու սին կը յայտարարենք... Եթէ տակաւին անտունը. ասոր մէջ հաճոյք կը գտնէ, մարդը, իր մեծ կարողութիւններով, պէտք է այսուհետեւ աւելի մաքուր ու աւելի բարձր ծագում մը ունենայ: Մեծ մտազրուութիւն մը նախ յիմար կը թուի, բայց՝ ապագային՝ պիտի ինչպանք պիտուածին վրայ ու այսուհետեւ խորհոյ մըն ալ պիտի տրտաղրէ սուղ մը սր կատարելապէս պիտի խորհի:»

Ան ատեն հնոցէն դուրս կը ցառքէ HOMUNCULUS Ը, վախէր քիմիադէանի ստեղծած սիրուն մարդուկը:

Մօտաւարապէս այս խօսակցութիւնն էր սր ընդունելու էր զիս անցեալ հսկանիքի կը բոքր այցելեցի այդ Ս. Ղազարի վանքը, ուր վանականներ ազգ մը կը ստեղծեն:

Տեսայ իրենց աշխատանոցը. իրենց տպարանն է ատի: Իրենց հրաշալի գրատան մէջ, հայ պատմագիրնեան գրչագիրները հաւաքած են: Ատանցմով կը ցանն գրել

ազգային պատմութիւնը: Անհոն ծառայութիւն: Նշանաւոր գրող մը, խանգաւառ հայրենասէր մը, երկուսուսուր հայր սր, «Ռըվիւ սէ Ռըվիւ»ի մէջ, Տիգրան Երկաթ ծածկանունով կը ստորագրէ առաջնակարգ ստուգնասիրութիւններ օսմանեան կայսրութեան ցեղերուն վրայ, իր հայրենակիցներուն համար կը գրէ. «Թէպէտ, ամենուրեք, ոտնակոխ արիւնլուայ հայրենիքի մը յիշատակը իրենց կ'ընկերանար, սակայն տակաւ առ տակաւ կը մտնային իրենց պատմութիւնը: Իտալիոյ մէջ, իտալերէնը կ'ընդունէին արդէն. Թիւրքիոյ մէջ իսկ եւ Պարսկաստանի մէջ, թող կուտային սր իրենց լիզուն ազուտազուէր բարբարիկ աստութիւններու խանութիւնը:» Ս. Ղազարի վանքը լեզուն պահած եւ վարժարաններու միջոցաւ տարածած է: Անոնց զբքերը Հայերուն յիշեցնելով իրենց ծագումը եւ անցեալը, ազգային դազափարը արժնոյցոյցին ամենէն առաջ: Գրուցներն ալ պարտութեանց եւ հայրենիքին պաւանները տարածեցին: Ս. Ղազարի մէջ է սր ստեղծուեցաւ հայկական հայրենասիրական գրականութիւնը:

Ս. Ղազարի ապարանին կից փոքրիկ գրատան մէջ, բրտականտայի զանազան տեսարաններ գնեցի: Ամէն լեզուով կան այդ տեսարաններէն: 1861ին Ալիշանի արտասանած պարզեւարաշուութեան մէկ ձառը ատի: Հայաստանի մէկ նկարագրութիւնը և գրուատիքն է ասիկա. «Հայաստան մէկ որոշեալ վիճակ կամ նպատակ մը ունեցեր է, յառաջ բան զայլ ազգեր. և սր աւելի հարկաւոր է գիտնալու, զիս այդ վիճակն լինցած չէ: Գազանիք մը չէ ըսածս, և ոչ խորհրդաւոր բան մը, այլ հնացեալ հաւանութիւն մը հայ մտաց, թէ զեռ գործ մը սննի կատարելու, բարեբաստիկ ցարծ մը երկրիս վերայ: Ամէն բան լմանցած չէ իրեն համար. գուձ մը պիտի բացուի իրեն համար ատեն մը... սը շատ այլ հեռու չէ ինչպէս սր կարծեմ. այդ գուձն՝ երկար ժամանակ կրկին կրկին կզգած փակած չմնայ պիտի. արդէն զօրաւոր բանայիքներ կը տեսնեմ, և համարձակութեամբ կ'ուզեմ ցուցնել, չըլլայ թէ վախնար... մեր կրջանիւթեան ապագայ բանչիքն, այդքան երկար ժամանակի ի վեր բողձացեալ բանչիքն, այդ բանչիքն է գաստիարակութիւնն: Դաստիարակութիւն հայրենասիրական. հայրենասիրութիւն յեցեալ ի վերայ իմաստասիրութեան...»

Ահաւասիկ հայ ազգայնութեան պայծառ ու կորովի հաւատարիքներ, այնպէս չէ՞, եւ, աւելի լաւ բան քիմիադէալը առ Մեքիսթիսթիս, այդ ատենարանը կը սորվեցնէ մեզի թէ ի՞նչպէս կը ստեղծէ HOMUNCULUS Ը, պատիկ ազգը սր հիմակ կ'ուզէ իր գոյութիւնը հաստատել, կ'ուզէ ապրիլ: Պատմութիւն մը տալով անոր:

Հետաքրքրականը, — և սր պիտի մպակցենք Մեքիսթիսթիս, — սա է թէ Ս. Ղազարի վանականները Գրան հըպատակներ ըլլալու հանգամանքովն է սր գոյութիւն սննին: Եթէ չեմ սխալիր, Մահիկին պաշտպանութեան տակը գտնուելուն համար է սր կրօնական միարանութեանց մասին իտալական օրէնքները զօրծագրուած չեն վանքին նկատուամբ:

Հայերը կրնան Ս. Ղազարի կրթութեան մեղադրել իր չափազանց կրօնական հանգամանքը և իր գուձ պատմական մտահոգութիւնները. երկուսուսուր հայերը, նորեւ

բը, կը նկատեն թէ գիտական զարգացումը զորթփփխէն ստացած են՝ մասնաւորապէս թանկագին եղած է ազգային մտածման համար: Վերը ըսինք. ազգայնութիւն մը կազմելու համար՝ յիշատակներու մասնադաւթիւն մը պէտք է: Վենետիկի Ս. Ղազարը աստիկա կ'առաջադրէ Հայե. բուն. բայց նաեւ իրագործելիք յայտարար մը պէտք է. թիփփխէն, ուր յեղափոխական էն նոր մտածումները կը խնդրուին, կրնան ստանալ աստիկա:

Աստիկա մեզի կ'առաջնորդէ ընդունելու թէ երկու աշխատանոց կայ ուր Հայաստանը ստեղծուած է: Բայց սա ստույգ է թէ ազգ մը, որ ամբողջ աշխարհի վրայ ցրուած է, որուն հողը Ռուսիայ, Պարսկաստանի եւ Թիւրքիայ միջև բաժնուած է, որուն զուակները իրենց առեւտուրին եւ իրենց բնակութեանց բերմունքով բազմաչեզու են, մասե- նագարանով մը եւ ապարանով մը պահպանուած, վերա- կազմուած է:

Ս. Ղազարի վանքը աշխարհիս էն հետաքրքրաշարժ վայրերէն մին է, որովհետեւ հոն կը ճշգրտեն, շօշափելի կերպով կը համոզուին սա ճշմարտութեանը թէ ազգ մը հասարակաց պատիրակութեան մը արդարութիւն է: Դա- սարանի բնակումը ու գերեզմանատնով մը, մարդ հարկ եզածը սննի հայրենիք մը կազմելու համար:

Դժուար է երեւակայութեամբ չփոխադրուել զէպի այդ վենետիկեան կղզեակը այս միջոցին ուր հեղինակները, որ Աթէնքի Համալսարանին մէկ վեհ ստեղծագործութիւնն է, եւ Հայաստանը, զոր պատմագիրներ ու թիւրքերուն խոշտանգումները կը պահպանեն, այնքան կարեւոր տեղ մը կը բռնեն արեւելեան մտահոգութեանցը մէջ:

Այն թանձրամիտներուն որոնք շօշափելի սովորուն միայն կը հաւատան, խորհրդածութեան սա նիւթը կու- տանք. ահա՛ արեւելեան խոսիւմը՝ արեւելեանքու ու վար- ժապեանքու սակզմամ երկու խառնելու երեւումովը:

ՄՕՌԻՍ ՊՍՈՒԷՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐՋԻՆ «ԿԱՊՈՅՏ ԳՐԻՆ» ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԼԷՆ

Վերջին «Կապոյտ գրքին» մէջ կը գտնենք երեք ըն- դարձակ տեղեկագիր անդլիտիտան հիւպատոսներէ պատ- րաստուած, մին Մուշի գաշտին, երկրորդը Չմշկածագի, Արաբկիթի ու Ահնայ եւ երրորդը Սասունի ու Կիւնճի կա- ցութեան մասին: Այդ տեղեկագիրներուն առաջինը, զոր գրած է Բազէշի գեր-հիւպատոս Պ. Ֆրէնսիս Էստերրա Գրուս, կը թարգմանենք ի ստորեւ, «Նոր Կեանք»ի յա- ջարդ թիւերուն թողալով ներկայացնել միւս երկու տեղեկա- գիրներն ալ:

Մայիս Տին մեկնեցայ Լըզլուսէն ու մայիս ԷՉին Բազէշ մասնեցի՝ Լըրակլի, Մէճիտլի, Խօրսուի, Կիւմ- կիւմի, Սիխապլիի եւ Գուշի ճասրով: Մինչեւ Խոնու խնձի ընկերացու նպատաստանայց գործակալ Պ. Պոզոս Բա- րահատեան, որ կը պարտը սերնցու բաշխելու Խոնուի գաւառակին հետաւոր գիւղերուն, որ թշուառութիւնը շատ մեծ է:

Ք Ի Ի Ր Տ Ե Ր Ը

Բասենի գաշտին եւ Խոնուի միջեւ տարածուող լեռնոս երկրին մէջ, որ բրդաբնակ է, գիւղացիները շատ զըր- դուած գոյս՝ տասնըմէկ Համիտիէ հեծեղաբունդ կ. Պա- լիս փութացնելու նորստաց հրամանէն: Մարտական ուղին շատ զօրաւոր էր ամբողջ գաւառակին մէջ: Չիս Նիւմա- պէս կը հարցափորձէին թէ գունդերը ո՛ւր պիտի զրկուէին անկից, եւ զօրականները մեծ յոյս սննէին թէ հեղինա- կան սահմանադրիսին զինուորական գործադրութեանց պի- տի մասնակցելին: Ըստ երեւութին, ի վէս կոշուածներուն մէկ մեծ մասը այս գաւառակէն կ'երթայ, սրովհետեւ ամ- բողջ զիւղեր, ինչպէս Մէճիտլի, Էյուպլաս, Աւիւնիգամի (?), Տըրվեշգամի (?) եւ այս ճամբուն վրայ ուրիշ գիւղեր իրենց պատրաստութիւնները կը տեսնէին մեկնելու համար: Կիւմիւմ, որ Համիտիէ երկու հեծեղաբնոյի կեդրոնն է, գնդապետ մը, վեց հարիւրապետ եւ ուրիշ սպաներ բանա- կած են, բայց ո եւ է փորձ չեն ընել զինուորները մար- զելու: Չիւրնիս գաշտերուն մէջ կապած են եւ զեղացի- ներուն երեսին կ'ապրին, ժամանակին անցընելով շրջա- կայքը մանր մունր գաղութիւններ ու յափշտակութիւններ ընելով:

Թիւրքերն իրենք իսկ կը գտնուատին թէ Համիտիէ հեծե- լագորբին զինուորագրութեանն ի վեր Բիւրսերը անտանելի դարձած են: Ասաջ գաղթիւնները բիշ շատ հեղինակաւ- թիւն սննէին գաւառակին մէջ ու վախ կ'ազդէին, բայց վերջերս՝ իրենց կողմէ ո եւ է գիտադրութիւն արհամար- հանքով կ'ընդունուէր, որովհետեւ Բիւրսերը ո եւ է մի- ջամտութեան կը նեղանային՝ սա հիման վրայ թէ զապ- թիւն ու քիւրա հիմակ երկուքն ալ Նորին Կայսերական վեհախորհրդութեան զինուորներն են, եւ, հետեւաբար, կը բայր: Արդիւնքը բացայայտ է: Ժանտարմաները, Բիւր- սերուն վրայ ո եւ է հսկողութիւն գործադրելու կամ ա- նոնց ո եւ է յանդիմանութիւն ուղղելու անկարող, բաւա- դոյն բազաբակախորհրդեր կը համարին անոնց հետ ձեռք ձեռքի գործել, հետեւանքը սա ըլլալով որ գաղթիւնն ու Բիւրսին յարաբերութիւնները շատ լաւ են, բայց Սուլ- թանին բրտատնեայ անվէն հպատակներուն վրայ հարս- տահարութիւնները՝ անարգել:

Մուշի գաշտին մէջ, Հասթէոյ, քիւրա ցիւղապետ մը որ լեռներէն վար իջած էր՝ երաշխաւոր ըլլալու իր կեցօրը որ յանցանք գործած ու փախած էր, ըսաւ ինձի թէ սոյա- նութիւնը ամենօրեայ զէպք մըն էր Բիւրսերուն մէջ: Կա- տուի պէս իրար կը սպաննէին: Կառավարութիւնը ուշա- գրութիւն չէր դարձներ, ու չէր համարձակեր անոնց մօ- տենալու: Մուշի գաշտը եզերող լեռներուն քիւրա գիւղե- բուն շատը բնաւ տուրք չէին վճարեր: Բիւրս մը նուա- ճելու միակ ճամբան էր գանի սպաննելը:

Բազէշի կառակալը, որուն կը հարցնէի թէ միջոցներ ձեռք անուած էին պտուղելու համար Մօտքիի Բիւրսե- րը որոնք վերջերս սպաննած էին գայմագամ մը եւ երկու գաղթիւն, պատասխանեց թէ կանոնաւոր զօրք զրկուած չէր անոնց վէմ, բայց թէ Ալայ պէյին (ժանտարմաներու հրամանատարը) «որ շատ քաջ մարդ մըն էր» մէկ քանի ուրիշ գաղթիւնով զրկուած էր բննելու համար եղեւութիւնը:

Իսկ Ալլաթի գաւառակին մէջ պատահած անբնդհատ հարստահարութեանց մասին, նորին Վսեմութիւնը զիտել տուաւ թէ Քիւրտերը շատ վտանգաւոր ժողովուրդ մըն են՝ հետեւին գործ ունենալու համար, եւ լռելիայն ընդունեց թէ իր հրամանին տակ գանուած ուժերը անբաւական էին՝ զինքը անոնց վրայ հսկողութիւն ի գործ դնելու կարող ընելու:

Ի՛մանամ թէ Հիւսէյին փաշա, Հայտարանը Քիւրտերուն պետը, Կ. Պոլսէն Ալաշկերտ վերադարձին՝ Երզրնիկ հասեր է երեք շաբաթ առաջ, պատուանշանի ու մեծ պատուի արժանացած: Հետեւանքը եղած է Ալլաթի մէջ խողովութեանց վերսկսումը, ու երկու զիւղ արդէն թաւանի տրուած են: Արծեմ ալ վտանգաւոր ու մոլեղին մարդուն ի՛նչ ըլլալը քաջ ծանօթ է անգլիական զեւսապ. նաաւունը, ու մեկնութեան չի կարօտիր: Իր ներկայութիւնը այս կողմերը՝ հաւանօրէն ծանր անկարգութիւններ առաջ պիտի բերէ:

Հ Ա Յ Ե Ր Ը

Շատ Հայեր տեսայ Էրտէպ, խնուս, Սիխալի ու Մուշի գաշտին վրայ սփռուած զիւղերուն մէջ:

Էրտէպի Հայերը անցեալ տարի թալլուեցան Քիւրտերէն, սրոնք ձեռուընին ինկածը առին տարին, ու բնակիչներէն մէկ-երկուքը սպաննեցին: Մէկ քանի իսլամ ընտանիք միայն կը բնակին հոն, սրոնք պաշտպանութիւն ընծայեցին մէկ քանի կիներու: Քիւրտերը չզոյան իսլամ աւանդուն: Միւս զիւղացիները գաշտը փախան: Ժանտարմաներու պահականօքը չորս մղոն միայն հեռու է, աչքի դէմ, հանգիպակաց կողմը, Հասան-Գալէ: Զապթիէններուն իմաց տրուեցաւ, Քիւրտերը իրենց կողոպուտով իրենց լեռնական ամրոցները քաշուեցան, ու Հայերը բռնի իրենց ամայի զիւղը քշեցին նորէն: Որչափ կրնամ գատել, ստիկա կը թուի ըլլալ քրդական աւարառու արշաւանքերէն յետոյ վարուելու սովորական եղանակը: Էրտէպ ամբողջութեամբ կատարելապէս բարգաւաճ կ'երեւնար արդի պարագաներուն մէջ: Անմիջական տրտունջ մը չիմացայ, թէպէտ ինծի ընկերացող զապթիէններուն ներկայութիւնը ի հարկէ զիւղացիներուն թոյլ պիտի չի տար ո եւ է փորձ՝ իրենց պանգատները արտայայտելու: Հայերը չեն ուզեր խօսիլ անոնց ներկայութեանը, ըստ որում զապթիէններուն կատարելապէս անպատիժ ի գործ դրած զեղծումներուն մասին ո եւ է յայտնութիւն՝ վերջէն աւելի սաստիկ հալածանք առաջ կը բերէ: Եւ որովհետեւ զժուար է որ իրենց զանգատներուն մասին խօսին՝ առանց երեւան հանելու այդ զեղծումները, խոհմութեամբ բերանին կը կղպեն, ու իրենց իրական կացութեանը մասին մեծազոյն զժուարութեամբ կարելի է լուսարանուիլ:

Խնուս, որ 300 տնով քաղաք մըն է, հիմա հեծելու զօրքի ջոկատ մը կը գտնուի, 60 հոգիէ բաղկացած:

Գալմազամը, իսմայիլ պէյ, նոյն օրերը պաշտօնանկ եղած էր, բնակիչներուն իր հարստահարութեանցը դէմ բարձած բողոքներուն պատճառաւ: Ճամբան հանգիպեցայ իրեն որ Էրզրում կ'երթար: Էրզրումէն հազարապետ մը զրկուած էր անոր տեղ առժամաբար:

Հիւրընկալուեցայ Հայ վաճառականի մը տունը, որ ընդարձակ հողեր ունի շրջակայքը եւ սր հեռաւոր զիւղերը

գացած էր սերմնցու բաշխելու: Ըսին ինծի թէ իր փեսան Բաղէշ կախած էին, 1895ի գէպքերէն ետքը:

Հայերը յայտնեցին թէ բալորովին վհատած էին գործերուն ընթացքէն եւ բարենորոգումներու բացակայութենէն: Զարդերուն մէջ իրենց կրած զոհողութիւններէն յետոյ՝ բարեօրում մը յուսացած էին, բայց ո եւ է բարեօրում գտած չէին: Ըսին թէ Խնուսի մէջ թիւրքերուն կրօնական ասելութիւնը շատ սաստիկ էր, ու թիւրք զինուորներ եւ ուրիշներ բացէիբաց կը յայտարարէին թէ, առաջին աթիւ, պիտի ջնջէին Քրիստոնէութեան անունը: Մանր մունր հալածանքը ընդհանուր էր, ու մինչդեռ ջարդերէն առաջ թիւրքերը Հայ խանութպանէն ապրանք զընած ատենին խնդրուած զինը կուտային, հիմա խիղճ չէին ընէր ուզածին առնելու իրենց յարմար գտած գնովը, ու այս յափշտակութեան ետեւէն բնութեան սպառնալիք կուգար եթէ Հայը զիմադրէր: Ըսին թէ իրենք ինքնօրինութիւն չեն ուզեր, հապապարզապէս բարենորոգում ու ապահովութիւն: Վերջապէս, հարցուցին թէ Երոպայի քրիստոնեայ պետութիւնները պիտի շարունակեն թոյլ տալ թիւրքին որ ամբողջ ազգ մը ջարդէ, եւ թէ պիտի սպասէին որ ամբողջ Հայ ժողովուրդը ջնջուի՝ երկար ատենէ ի վեր խոստացուած բարենորոգումներու գործադրութեան մասին պնդելէ առաջ:

Աշխատեցայ հանդարտեցնել զիրենց եւ կրցած խորհուրդներս տուի: Ըսի թէ բարենորոգումներու գործադրութիւնը, թէպէտ հանգամանքներուն բերմամբ ի հարկէ յետաձգուած, միշտ նկատողութեան մէջ էր ու աչքէ չի պիտի հեռացուէր: Իրենց յանձնարարեցի բալորովին հանգարտ մնալ եւ ուշադրութիւն կամ խրախոյս չի տալ Գոմիթէնի ստաբիլիտետին կամ յեղափոխական գործակալներուն ուրոնք տակաւին իրենց քաղաքներուն շուրջը ման գալու վրայ էին եւ որոնց առաջարկութիւնները թելադրուած էին անձնական շահու տեսակետներէ: Գաղթականութեան ճամբան բաց էր իրենց առջեւ, բայց որչափ ատեն որ նախընտրէին իրենց հայրենի հողին վրայ ապրիլ՝ պէտք էր համբերութեամբ հեռու մնային ո եւ է շարժումէ եւ ըսպառէին բարենորոգումներուն գործնք ժամանակը անշուշտ պիտի բերէր:

Խոստացան ո եւ է յարաբերութիւն չունենալ յեղափոխական գործակալներու հետ, բայց վախ յայտնեցին որ, եթէ գործերը աւելի արագ չընթանային, շատ քիչ Հայ պիտի մնար Երոպայի խոստացած բարենորոգումներու գործադրութենէն օգտուելու:

Գիշեր մը անցուցի Հայ զիւղ մը: Քրդական յարձակումներու, ծայրայեղ տուրքերու, եւ իրեն եղած բողոքներուն նկատմամբ՝ կառավարութեան անզոյ պատարեթութեան մասին տեղեւորութեան տարտամ արտայայտութիւններ ողջունեցին զիս նոյն հետայն: Հարցուցին ինծի թէ բարի լուրեր կը տանէի իրենց: Շրջակայքէն քահանայ մը մը եկաւ իս տեսնելու, ու ըսաւ թէ իր եկեղեցին, զիւղէն քարէնիկէ մը հեռու, անցեալ տարի կողոպուտուած էր Քիւրտերէն, եւ իր տասը զոմէշները, զոր ինք 100 ոսկի կը հաշուէր, մորթած ու կերած էին: Ինք զիւղը փախած ապաստանած էր: Մուշի իշխանութեանց ուղղած կրկնակի

բողոքները ապարդիւն մնացած էին: Իրեն ըսեր էին թէ Հայերը սպասելու էին այդպիսի վարմունքի մը, որովհետեւ իրարանցում ու խռովութիւն առաջ բերին:

Քահանայէն ետքը իս տեսնելու եկաւ մէկը որ Պոլիսինը տարի զոնապան եղած էր ու ջարդերէն յետոյ իր գիւղը զրկուած բռնի: Ըսաւ թէ Չարպոր, Այնա ու Սրինդ գիւղերուն չէրբէզ ու լազ գաղթականները այնչափ գէշ էին որչափ Քիւրտերը: Միշտ հայերէն ստակ կը կորզէին բրունի, ու եթէ ասոնք տալ չուզէին՝ իբր յեղափոխական կը մատնուէին ու անմիջապէս կը ձերբակալուէին իբր «կասկածելի»: Կ. Պոլիս եղած աստեղը, ըսաւ, իր վաստակովը ընտանիքը կը պահէր ու տուրքերը կը վճարէր, բայց, դարձէն ի վեր, չէր կրնար ծայրը ծայրին բերել: Քիւրտերը բռնած տարած էին գիւղին արջառներուն մեծագոյն մասը, եւ թողուած արջառը բաւական չէր ամբողջ գիւղին հերկի աշխատութեանց: Անոնք սր զոմէշ կամ եզ չունէին, հողը կը գարձնէին իրենց շինել կրցած ո եւ է փայտէ գործիքներով: Ծայրայեղ տուրք, զապթիէներու կողմէ դրամական բռնի պահանջում ու քրդական աւարտութիւններ զիրենք անկարող կը դարձնէին ո եւ է օգուտ քաղելու հունձքէն:

Այս գիւղին վճարած տուրքին բանակութիւնը իմացայ հաւաքող զապթիէն. հետեւաբար կրնամ հաւաստի ըլլալ թէ ճիշդ է: Քսանըհինգ տուն ու իբր քառուսն սաքը—ձեռքը բռնող մարդ մնացած է, եւ իւրաքանչիւր տարի կառավարութեան հաւաքած գումարն է 300 (հինգ հարիւր) օսմ. սակի: Ասոր մէջն է զինուորական տուրքն ալ, որ, հակառակ Կ. Պոլսէն հասած հրամաններուն թէ երկու տարուան համար շնորհուած է, ըստ սովորականին կը գանձուի:

Գիւղացիները զապթիէին բացակայութեան օգտուեցան ինծի յայտնելու համար թէ շատ աւելի կը շարժարուէին կառավարութեան ձեռքէն՝ զօրքերուն, զապթիէներուն ու հարկահաններուն միջոցաւ, քան Քիւրտերէն: Չապթիէները, ըսին, Քիւրտերէն շատ աւելի գէշ են, ու աւելի վախճալիք: Իրենց գիւղը որս մըն էր ամենաւն, ու զինուորները միշտ կը զրկուէին գիւղը բնակելու, առանց ո եւ է վճարում ընելու: Քիւրտերը իրենց կիները կը բռնաբարէին: Քիւրտերը ու կանոնաւոր զօրքերը միացած կը հարստահարէին զիրենք, սա տարբերութեամբ միայն որ կանոնաւոր զօրքերը կը ստիպէին գիւղացիները պաշտօնագրեր ստորագրելու սրունց մէջ ըսուած էր թէ ինչ որ առած էին՝ վճարած էին: Գիւղացիները, հետեւանքներէն վախուն, ստիպուած էին ստորագրելու: Հարիւրի շափ է. րիկմարդ գիւղէն գաղթած էին, կիներնին ու զաւակներնին թողելով: Եւ սակայն տուրքը պակսեցուցուած չէր եւ ամբողջ համազումարը կը գանձուէր մնացողներէն: Հարկահանները գաղթողներուն կիները ու զաւակները իրենց տուններէն դուրս կը հանէին բռնի, տունները կը փլցնէին եւ գերանները ու տախտակները կը ծակէին՝ տուրքերը վճարելու համար: Ինծի ցուցուցին փլցուած տունները:

Կիւսիլիւմի ու Մուշի մէջտեղ 200 ի շափ հայ գիւղկայ: Երկիրը արգաւանդ ու ջրաբքի է, եւ, կանոնաւոր պայմաններու սակ, շատ բարգաւաճ վայր մը կրնայ ըլլալ:

Սալուհ, Հայ մը մօտեցաւ ինծի գոր Մուշի իշխանութիւնները շարաշար ձեռած էին, բայց, զապթիէին ներկայութեանը, չուզեց սլաւոնաւոր յայտնել: Սիւլաշ, որ քառուսն անոյ գիւղ մըն է՝ Մուշի գաշաին էն հարուստ մասին մէջ, Քիւրտերը ամէն օր ցորեն, գարի, կօշիկ, հագուստ եւայլն կը պահանջէին գիւղացիներէն: Իշխանութիւնները թող չէին տար մեկնիլ գաղթել ուզող բնակիչներուն: Միւս կողմէ կուտակալը հաւաստեց ինծի թէ տուրքերնին վճարած բոլոր Հայերուն թոյլ կը տրուի կլլել իրթալ, եթէ ուզեն:

Չ Ա Պ Թ Ի Է Ն Ե Ր Ը

Ոստիկան—զինուորները կամ զապթիէները չորսէն ութ հեծեալ մարդերու ջոկատներէ կը բազկանան հիւսա, մեծ մասամբ շատ գէշ հագուած ու զինուած, բայց ընտիր ձիերով: Այդ ջոկատները իբրբմէ 12էն 13 մղոն հեռաւորութեամբ պահակերութիւն կ'ընեն ոտքահանգակի ճամբուն երկայնքը:

Բացի ոտքահանգակին ուղեկցելու պարտականութիւնէն, տեղական կառավարութիւնը իրենց պաշտօն կը յանձնէ տուրքերը հաւաքել գիւղերէն, մաքսանենգութեան առաջըր անել, յանցաւորները դատական իշխանութեան տանիլ, ընդհանուր բարեկարգութիւնը պահպանել, եւ կատարել կառավարութեան ընդհանուր կամ մասնաւոր ո եւ է գործը որուն համար մարդ մը ու ձի մը պէտք է: Հետեւաբար զապթիէին պարտականութիւնները բազմաթիւ ու բազմապիսի են, եւ շատ պահանջանքներու մէջ գծուար թէ մէկ կամ երկու մարդէ աւելի գտնուի: Իրենց ամսականներուն վճարումը ամէն տեղ նոյնը չէր ճամբուն երկայնքը: Ոմանք տասնըհինգ եւ ուրիշներ ասոնք մէկ ամսէ ի վեր ամսական առած չէին, մինչ ամենէն բազկաւորները՝ չորսէն մինչեւ ութ ամսական կ'ուզէին: Չապթիէի մը թոշակն է ամսական 2 օսմ. սակի: Ինք կը հայթայթէ ու կը պահպանէ իր ձին. տարին երկուքուկէս ամսական կը վճարուի իրեն դրամով եւ մնացեալին փոխարին իրեն կը արօրի գարի, ցորեն, խոտ եւայլն, ու «հալալէ» ներ, զօրոնք ներկայացնելուն՝ կը ստանայ արմտիք, որ կ'ենթադրուի թէ սաչափ ամսականի համահաւասար գումար մը կը ներկայացնէ: Բայց տեղական գանձուն ուրոշած զինը հրապարակին գինին կրկինը ըլլալով, զապթիէն իրեն պաշտօնապէս յատկացուած թոշակին կէտը միայն կ'ընդունի:

Այս հանգամանքներուն մէջ, գծուար է ըմբռնել թէ զապթիէ մը ինչպէս կրնայ ապրիլ ու ձին պահել: Աւելորդ է ըսել թէ ինքզինքը ու ձին կ'ապրեցնէ գիւղերէն ուր կը զրկուի պաշտօնական գործերով, ու իբր հարկահաւաք իրեն յանձնուած պաշտօնէն օգն ա կը քաղէ՝ զրպանը դրնելու համար՝ ի վնաս գիւղին՝ ինչ գումար սր իր անմիջական պէտքերուն անհրաժեշտ նկատէ: Ոչ—իսլամ զապթիէ շտապ մինչեւ Մուշ հասնիլ, սր կ'իմանամ թէ շատ կայ ատոնցմէ: Իսլամ զապթիէներուն մէջ ամբողջութեան ու անկարգապահութեան զգացումը շատ ուժով էր: Շատ գանգամներ լսեցի աստիճանի բարձրացման պակասութեան, Համիտի հեծեալազօրքերուն նկատմամբ ցոյց

արուած կողմնակալութեան, Բիւրաբերուն անպատիժ լըր- բութեան, իշխանութեանց թալուրեան, եւ մանաւանդ, իրենց ամուսնականներուն վճարման եղանակին անկանոնու- թեան մասին:

ՉԻՆՈՒՈՐԱՆԻՆ ՏՈՒՐԲԸ

Բազէշ կ'իմանամ թէ ջանքեր կ'ըլլան զինուորական տուրքը բաւ սովորականին գանձելու: Տեղական իշխա- նութիւնները հակառակ են այս բանին, եւ միջոցներ ձեռք կ'անեն արգելելու ատկա երբոր կը տեղեկանան: Այս քաղքին երեւելիներէն Հաճի Լեմէլատինի պէմ — որ ա- տոր համար ձերբակալուեցաւ — կուտակալին պիտուր գանդատներէն մին սա էր թէ բարձրագոյն հրամանին ան- հնազանդ կը գանուէր եւ ոչ միայն զինուորական տուրքը կը հաւաքէր, այլ նաեւ զբաւանդ կը գնէր: Ներկայ գրու- թեամբ, որով զապթիւնները կը զրկուին տուրքերը գան- ձելու, կարելի չէ այս տեսակ զեղծութիւնը առաջը առ- նել, եւ կը վախճամ թէ շատ զիւղերու մէջ զինուորական տուրքը կը հաւաքուի, հակառակ տրուած հրամանին:

ՅՐԷՆՍԻՍ ԷՏՈՒՐԸՏ ԳՐՈՒ

Բազէշ, 19 մայիս 1897.

«ԿԱՊՈՅՏ ԳԻՐՔԸ»

ՆՊԱՍՏԻ ԳՈՐԾԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԿԻՂԻՍԻԱ

Այն հարկաւորաբար համառօտ ուսումնասիրութեանը մէջ զոր վերջին անգամ նուիրեցինք «Կապոյտ Գրքին», ոտիպուեցանք ի բաց թողուլ բազմաթիւ տեղեկութիւններ որոնք նոյնքան շահեկան են: Հայաստանի ու Կիլիկիոյ արդի կացութեան իրազեկ ըլլալու միակ աղբիւրը կը մնայ Կապոյտ Գրքը, որովհետեւ Հայոց քաղաքական, ընկե- բական, կրօնական կեանքին ամենօրեայ մանրամասնու- թիւններովը կը զբաղի անարգել:

Այս անգամ կը ներկայացնենք ամփոփուած Անդլիոյ ներկայացուցիչներուն հազորգած տեղեկութեանց՝ Հա- յաստանի ու Կիլիկիոյ մէջ նպաստներու բաշխման գործին վրայ: Սասունի տրուած օժանդակութիւնը, որ մասնաւոր տեղեկագրի մը նիւթ կը կազմէ, առանձին պիտի ներկայացնենք:

* * *

Խարբերդի հիւպատոսը կը տեղեկագրէ 1896 զեկ- տեմբեր 29ին թէ ամերիկեան Կարմիր-խաչի ընկերու- թեան գործակալներուն Ակնայ զիւղացիներուն բաշխած անասունները՝ զապթիւններուն կողմէ զբաւուած են տուր- քի փոխարէն: Գրաւուած անասուններուն թիւն է 8 եզ ու կով, 6 ոչխար եւ 54 այծ: Նոյնպէս Չելիք օղլու Յակո- բի նպաստ տրուած 180 դրուէր իրմէ բանի անուած է: Կուտակալը կը հրամայէ որ եւս զարձախն, բայց Ակնայ գայմադամը կ'օրհանայ եղբուրէնը: Արդէն, ինչպէս կը յայտարարեն հայ զիւղացիներ, գապթիւնները այդ անա-

սունները ծախած են թիրքերու, որոնք զանոնք մորթած կերած են: Այլ ո՛ր եւս պիտի անուի:

Հայաստանի մէջ տիրող թշուառութեան վրայ գաղա- փար մը կրնայ տալ հետեւեալ հատուածը՝ խարբերդի հիւպատոսին 1897 յունուար 23ի տեղեկագրէն. «Ինա- նալով թէ Պէզմիշանի մէջ մեծ կարօտութիւն կար եւ յս- զովորդը կը խոշտանգուէր հարկահաններէն, անցեալ օր հոն գացի քափուչին կրօնաւորի մը առաջնորդութեամբ եւ այցելեցի աւելի քան երեսուն հայ ընտանիք, ամենէն աւելի աղքատներէն: Պէզմիշան ջարգերէն առաջ 266 տուն ունէր, որոնցմէ 260ը բանդուեցան Բիւրտերէն, ո- ռոնք տասներկէնք օրի չափ աշխատեցան այդ աւերման գործին համար: Գիւղը Մէզրէն երկու ժամ հեռու է մի- այն. հիմակ աւերակներու անձեւ կոյս մըն է լոկ, սրուն մէջ բնակիչները կը կծկախն՝ բոլորովին չկործանած պա- տերու վրայ ձգուած մացառէ ամառներու տակ: Պատըս- պարան մը կառուցանելու այս նախնական փորձն իսկ մե- ծապէս սպասած է անցեալ աշնան հունձքէն զիւղացիներ- բուն ձեռքը անցած չնչին գումարը: — Այցելութեանս մի- ջոցին ինամբով աչքէ անցուցի բնակարանները եւ հսկէ բոլոր կարանները որոնք կը պարունակէն ցորենի, «պուլ- կուր»ի կամ ալիւրի պաշարը: Մէկ բանի հիւղերու մէջ՝ քիչ մը ցորեն եւ մէկ բանի վայրի խոտեղէններ միայն գտայ. սորիշներու մէջ, մէկ ամսուան բաւելու չափ ցորեն ու ալիւր. եւ, ամենէն ճոխ խրճիթներուն մէջ, երկու ամ- սուան բաւելու չափ ցորեն ու «պուլկուր»: Շատ տեղ ան- կողնի կատարեալ պակաս կար, եւ պիտի իւրաքանչիւր բնակարանի մէջ՝ բնտանեկան ամանները բոլոր հոգէ կին: Բնակիչները ցնցոտիներ հազած են, եւ իրենց կացու- թեանը մէջ՝ փոխուիլ կարելի չէ իրենց: Հիւղակ մը, ուր այրի մը կը բնակէր իր երկու զաւակներով, 4 էն 6 տարե- կան, ծայրագոյն թշուառութեան ամենէն սրաաշարժ տե- սարանը կը պարզէր: Ուտելիքի միակ պաշարն էր քիչ մը ալիւր, հազիւ երկու երեք շաբաթ կ'իներ ու զաւակները ապրեցնելու բաւական: Անկողնի նմանող ս եւ է բանի հետքը չիկար, ու պատուած խոր մը ամբողջ կահ կարա- սին կը կազմէր: Տղաքը կ'իտամիւր կ'ին, եւ մծիբի կրակի մը մօտին վերեւ կծկտած կ'ին: — Ազանելիք ու քառասուն անկողին զրկուեցաւ այսօր Պէզմիշան՝ ամենէն աւելի կա- րօտ զիւղացիներուն բաշխուելու, եւ կարծեմ երկու ամիս չանցած՝ հարկ պիտի ըլլայ ցորեն բաշխել հոն: Եւ սակայն լաւատեղեակ անձերէ կ'իմանամ թէ այդ զիւղը ամբող- ջութեամբը նուա՛յ կարօտ է քան շատ ուրիշներ:»

Սըր Ֆիլիբ Գրքրի 1897 փետրուար 16 ին կը տե- ղեկագրէ լսրա Սողուկերի թէ Չմշիածաղի գայմադամը, որ Հայկական Նպաստամասոյց Յանձնաժողովէն 30 սո- կի կորզած էր տուրքի փոխարէն, պաշտօնանկ եղած է և յաջուրդը արգէն իբր 1,700 դրուէր եւս զարձուցած է հայ զիւղացիներուն, մնացեալը հեռահեռ վճարելու խոտու- մով: Գոնէ խարբերդի կուտակալը այսպէս կ'ընէ հիւղա- պատոսին, որ թերահաւատ մնալու շատ պատճառներ ունի:

Վանի անդլիական հիւպատոսը կը տեղեկագրէ 1897 փետրուար 8 ին թէ ամերիկեան Միտիսնարութեան ան- գամ Պ. Ալլէն իր խնդրանքին վրայ յօժարած է Պարս- կաստան երկու՛ր արջաւ գնելու եւ բերելու հայ զիւղացի-

ներսն բաշխելու: Այս արձաններու բաշխումին գործը տիրոջ պատմութիւն մըն է, որ թիւրք կառավարութեան գործերու եզանակը հրաշալի կերպով ցոյց կուտայ: Պ. Ալլէն մայիս 7ին 341 եզ կը բերէ Արճէշ (11 եզ հիւանդ Սևրայ թողուած են) ու Պարսկաստան կը գտնուի գնուածը շարունակելու: Վանի հիւպատոսը, որ նոյնպէս Պարսկաստան կ'երթայ Գաշնակցականներուն գործունէութեան մասին գաղափար մը կազմելու եւ զանոնք համոզելու որ « ես կենան յիմար ձեռնարկներէ », ճամբան կը պատուիր Արճէշի միտիւրին որ հոգ տանի այդ արձաններուն: Պ. Ալլէն նոր արձան չի կրնար գնել Պարսկաստանէն՝ պարսիկ կառավարութեան յարուցած դժուարութեանց պատճառաւ, ու արդէն գարնան հերկին ժամանակն ալ անցած է, անանկ որ մեծ օգուտ չպիտի կրնային առաւ, ու լաւ էր պատրաստ գրտմ աւեննալ նորանոր պէտքերու համար:

Վան գարձին, հիւպատոսը կը տեղեկանայ թէ արջւանները գեւ Արճէշ կը մնան ու բաշխուած չեն: Կառավարութիւնը, արձաններու հիւանդութենէ վախնալով, հեծելագորքի անասնաբուծը զրկած է քննելու զանոնք, ու սո ալ տեղեկագրած է թէ մեծ մասը հիւանդ են ու հսկողութեան տակ անուուելու են: Բայց հիւպատոսը կը հաստատէ թէ եզերը բնաւ հիւանդ չեն. միայն թէ, Արճէշի հայ գիւղացիները կաշտուած են անասնաբուծը որ հիւանդ տեղեկագրէ զանոնք, որպէս զի իրենց յատկացուած ժամանակէն աւելի երկար կարենան պահել զանոնք: Գիւղացիները այդպէս կրցած են ոչ միայն 97 ի ցանքը կատարել բնորոշակ աւարածութեան վրայ, հարգա 98ի հոնձրին համար ալ աշնան հերկին մէկ մասը ըննցնել: Եզերը սկիւրացած են այս շարաշար աշխատանքէն, ու հիւպատոսը կը հաստատէ որ արձաններուն վրայ գրուած արդեւրը մեծապէս փաստած է իր ծրագիրներուն իրակասնացմանը:

Ինչ որ է, կառավարութիւնը թող կուտայ վերջապէս որ եզերը բաշխուին, միայն թէ 7. 2 առ հարիւր մաքսատուրը մը կը պահանջէ անոնց համար, այսինքն 70 սակի, որ պէտք է գրաւ գրուի՝ մինչեւ որ խնդրը կարգավորուի: Պէտք է յիշել որ եզերը գնուելէ առաջ, Վանի կուտակողը խոտաբան էր որ մաքսատուրը չի պիտի անուուի անոնցմէ: Սըր Ֆելիք Գըրրի՝ անմիջապէս կը բողոքէ Մեծ-Եպարքոսին, ու լրտ Սողզալի հեռագրով իր հաւանութիւնը կը յայտնէ: Թիւրք նախարարներու խորհուրդը օգոստոս 3 ին կ'արտոյէ ետ գարձնել անուուած գումարը, ու այս սրտուած « մազպաթայ »-ով մը սուլթանին կը ներկայացնէ: Բայց մինչեւ սեպտեմբեր 16, որ « Կուպոյա զըրքին » պարունակած վերջին պաշտօնագրին թուականն է, օսմանեան կայսրութեան վեհապետը գեւ սրտած չէ թէ իր սուլթան մասնաւոր հայ գիւղացիներուն բերնէն խլած եօթանասուն սակին ետ գարձուելու է թէ չէ կայսրութեան կըմտացոյցը հարստացնելու է...

Խարբերով հիւպատոսը կը տեղեկագրէ 1897 փետրուար 19ին թէ բազին մէջ երկու զինուոր յարձակելով Ալիքան ձիւրգովեան անուն հոյ վոճառօրհանին վրայ որ 215 մեծիտիկի պարի մը կը տանէր ամերիկեան Միսիս-

նարութեան տունը՝ Հալէպի վրայ փոխանակապէս մը տանելու համար, զայն վերաւորած ու պարկը գողցած կին: Հիւպատոսին ջանքով երկու զինուորները կը ձերբակալուին ու զինուորական հրամանատարը կը խոտաւնայ որ զինուորական ատեանին առջեւ պիտի դատուին: Հիւպատոսը շատ հաւատք չընծայեր սասը, բայց կ'աշխատի որ զինուորներուն քովէն գտնուած 73 մեծիտիկն, որ տեղական իշխանութեանց ձեռքը անցած է, տիրոջը վերապարձուի գտնէ:

Կը յիշուի Անգլիոյ նպատակաւորաց յանձնաժողովին մէկ գործակալին՝ Եսուսֆ Եոճանի՝ սպանուած Սլեյքի մէջ ու վրան գտնուած 500 սակին անհետացումը: Բազէշի հիւպատոսարանին ջանքով, սճրագործները, վեց իւլաւ, գատատանի կը բաշխուին, ու կուտակողը կը խոտաւնայ որ 500 սակին պիտի գտնուի ու ետ գարձուի: Տիրապէքիի հիւպատոսը կը հեռագրէ այդիվ 17ին թէ վեցն ալ մահուան դատապարտուած են, ու Դուր յուլիսին կը հեռագրէ Բազէշ որ գատապարտեալներուն ինչքը ծախուի ու գողցուած գումարը հատուցուի: Հետեւանքը յայտնի չէ մինչեւ սեպտեմբեր 16:

Տիրապէքիի գեր-հիւպատոսը կը տեղեկագրէ մարտ 16ին. « Վերջերս նպատակ բաշխման համար Ճապոզուր (Կինճի գաւառ՝ Բազէշի նահանգին մէջ) կատարած ճամբորդութեանս միջոցին, Ճաճազուրի նպատակ կորստութիւնը շատ չափազանցուած երեւցաւ ինծի: Ժողովուրդը իմացեր էր որ ստակ կը գրկուի միւս գաւառները, ուստի ջերմապէս իր բաժինն ալ կ'ուզէր: 300 օսմ. սակի թուուցի հոն՝ ամենէն աւելի կարօտներուն ուսելիք ու եզ բաշխելու համար երկու տեղացի գործակալներու ձեռքով, եւ Ճապոզուրի յատկացուած գումարին մնացեալ 200 սակին վար պիտի այս տեղի (Տիրապէքի) համար, որ կարօտութիւնը աւելի մեծ է: »

Աստանայի գեր-հիւպատոս հագարապետ Մէսի, որ, ինչպէս կ'ըսուի, « կրակի պէս մարդ մը » կ'երեւայ, անգլիական « Սիւլի » մարտանաւով պտոյտ մը ընելով Բայասի ծովեզերքին երկայնքը, 500 օսմանեան սակի բաշխած է հայ գիւղացիներուն: Ֆրանսական գեր-հիւպատոսն ալ « Ֆորպէն » մարտանաւով նպատակ բաշխելու գացած է հոն: Հագարապետ Մէսի հետեւեալ կերպով կը հաշուէ այդ կազմերու հայ ազգաբնակիւթիւնը. Չոք-Մարգուան 700 հայ տուն, իբր 4,000 հոգի. իսլամ չիկայ գիւղին մէջ. Էօզէրի՝ 180 հայ տուն, իբր 1,000 հոգի. 60 իսլամ տուն. Օճաքը՝ 350 հայ տուն, իբր 2,000 հոգի. 200 իսլամ տուն. Չայը՝ 20 հայ տուն, իբր 100 հոգի. 200 իսլամ տուն. Նաճարը՝ 60 հայ տուն, իբր 300 հոգի. իսլամ չի կայ: Այս 7,500 հոգիի բրիտանեան բնակչութիւնը շրջապատուած է կատաղի իսլամ գիւղացիներէ:

Հալէպի հիւպատոսը կը տեղեկագրէ մայիս 14ին թէ Անտիոքի մօտի գիւղերը, Եօզուն Օլուք, Հաճի Հալիպի եւայն, զրամական մեծ նպաստներ ստացած են ուղղակի Անգլիայէն:

Հաճընի մէջ, նպատակ գործը շատ հանրօգուտ ձեւի մը տակ կատարուած է: Անգլիացի միսիոնար Մարգին բամբակի մանարան մը բացած է իրեն յատկացուած 500 սակիով: Տեղեկագիրը (12 յունիս 1897), որ Հա-

յիւրուն համար պատուաբեր չէ դժբաղգարար, պէտք է ներկայացնել. «Մեր «Փապրիքա»ն, ինչպէս տեղացիները կ'անուանեն, կը յառաջդիմէ: Հիմակ տասը «Թէզկեահ» սնինք որ կը բանին եւ աւելիի համար տեղ չունինք: Ու թը կը գտնուին շէքքի մը մէջ զոր վեց ամսուան համար վարձեցինք: Գժուար, գրեթէ անկարելի է յարմար շէքք մը գտնել (ամենքն ալ շատ մութ են), ու այնպիսի տեղ մը որ ջրի լաւ հոսանքի մը յարմարի: Այս ճարտարագիտութիւնը հաստատելու ջանքերուս մէջ՝ դէմս կը գտնեմ ոչ միայն համակրանքի պակաս, հապա նաեւ շատ ընդդիմութիւն: Այս մոլորիչին սնեքարեացականութեան ու դժգհի բնաւորութեան վրայ գաղափար մը կազմելու համար՝ հետեւինքն գործ ունենալու է: Գետնի մը պէտք ունէինք՝ գործարանը հիմնելու համար: Հայ հասարակութեան երեւելիներուն բացուեցայ եւ ինչպիսի որ աշակցին ինծի: Օ՛, յայտարարեցին թէ սրտանց պիտի օդնէին աւանկ լաւ գործի մը ու ինծի համար չնչին գնով հող մը պիտի գտնէին: Ինծի երկու կտոր հող ցուցուցին, որոնց իւրաքանչիւրին համար 150 օսմ. սոկի ուղեցին: Վերջի վերջոյ, քրիստոնեայ աղաներուն ինծի ցոյց տուածէն շատ աւելի լաւ ու կրկնապատիկ ընդարձակ հող մը գտնեցի իսլամէ մը՝ տասներկու (12) օսմ. սոկի:

«Մանուկներուն ու բանւորներուն նոյն վարձքը կուտանք ինչ որ կը սրուի Մարաշ, եւ տակաւին շատ դժուարութիւն կը քաշենք բանուր գտնելու: Մեր «Թէզկեահ» ներուն արտադրութիւնը խանութպաններուն առաջարկեցինք Մարաշի գիններուն վրայ զեղչով մը որ կը հաւասարի փոխադրողէքին ու իրենց վճարած միջնորդէքին, բայց դեռ չընդունեցին: Պատրաստ սնինք 30 «Թօփ»էն աւելի կտաւ (մէկ «Թօփ»ը 11 արշըն, կամ 8 կարտա): 2,000 «Թօփ»ի համար մանած սնինք: — Անգլիա դրեցի տեսնելու համար թէ կրնա՞նք հոն հրապարակ մը գտնել մեր ապրանքներուն. եթէ կարենանք, յուսամ թէ մեր գործը շատ ու շատ աւելի կ'ընդարձակուի: — Նոր շէքքը աղէկ առաջ երթալու վրայ է ու 100 էն 150 «Թէզկեահ»ի համար տեղ պիտի ունենանք, ներկելու սենեակներով եւ այլն: Մինչեւ հիմա 200 օսմ. սոկի ծախսուեցաւ մանածի, ներկի ու աւուրչէքի, ու դեռ բաւական ատեն հասոյթ ըստ պատելու չենք: Նոյնպէս մեքենաներ ապագայք եմ Անգլիա, որոնք, «Թէզկեահ»ներով եւ ուրիշ պիտոյքներով, 300 սոկիի պիտի հասցնեն ծախքը: Մինչեւ հիմա նպաստի գումարներ կը ստանայի, զորոնք գործածեցինք աւուրչէքի ձեւով՝ գործարանին շինութեան համար. ատիկա լինեցած է հիմակ, այնպէս որ 300 սոկիին մնացեալ մասը գործարանը աւարտելու պիտի գործածուի: Ժողովրդին մէկ մասին այս ձեռնարկին նկատմամբ բռնած դիրքին պատճառաւ, գործի սկսելու համար պիտի ստիպուինք փետտով ծախելու, բայց անգամ մը որ գործը քաշէ, ալ իրենց կարողութենէն վեր է մեզի խոչընդոտ ըլլալ: Հասարակութիւնը միաբերան կ'ուրախակցի այս ձեռնարկին համար. ընդդիմութիւնը կուգայ պիտաւորաբար եսասէր անձերէ որոնց բնաբանն է չքաջալերել ո եւ է բան որ իրենց հսկողութեան տակ չի գտնուիր եւ սոկից օգուտ չեն կրնար քաղել:»

Լորա Սուլպէրի, Անգլիոյ հայկական նպաստամատոյց յանձնաժողովին ձեռքով, անմիջապէս 200 անգլ. սոկիի նոր նպաստ մը ղրկել կուտայ այդ հիանալի մարդուն, եւ իբր ամիս մը յետոյ, յուլիս 9ին, հազարապետ Մէսի կը տեղեկագրէ Ատանայէն. «Հաճընէն առնուած նորագոյն լուրերը՝ մեր այնտեղ հաստատած մանարանին մասին, շատ լաւ են: Ամէն բան առաջ կ'երթայ յաջող պայմաններու մէջ, երաճ ապրանքը ընտիր է եւ հեազհետէ հրապարակ կը գտնէ: Վերջերս Աղիզիէն վաճառական մը մեծաքանակ ապսպրանք մը բրաւ, Մարաշ շինուածէն նախամեծար համարելով պայն: «Թէզկեահ»ներ պիտի հաստատենք նաեւ Շահր եւ ուրիշ գիւղեր ալ, այնպէս որ կարենանք աստիճանաբար աշխատանք գտնել գաւառին բոլոր անգործ քրիստոնեաներուն:» Հազարապետ Մէսի կը տեղեկագրէ վարձեալ. «Ատանայի նահանգին մէջ ու Հալէպի նահանգին շատ կողմերը, նշանակելի փոփոխութիւն մը կը հաստատեմ՝ զեղի լաւ: Քրիստոնեայ ազգաբնակչութեան նիւթական բարեկեցութիւնը աւելցած է, ու ապագային համար հաւանականութիւնները նպաստաւոր են: Հաճըն, քաղքին բնակիչները նորէն գրեթէ իրենքզիրենք կ'ապրեցնեն, մինչդեռ գիւղերը լաւ հունձք պիտի ունենան այս տարի, այս ամէնը՝ մեր բաշխած նպաստներուն շնորհիւ: Ֆէքքէ, Սիս, Քարս Պազար, Ատանա եւ ուրիշ տեղեր, ապագան շատ լաւ կ'երեւայ: Էն նուազ փայլունը Բայասի գաւառակն է, բայց ան ալ բարեփոխուած է:»

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՅԵ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին ղրկել առ
 L. FRANK,
 309, LADBROKE GROVE,
 (ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամբրիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

Կը հրատարակուի ամէն ամիս 1ին եւ 15ին: Արեւելքի համար (Պուլկարիա, Ռումանիա, Յուստան եւ այլն) կը խնդրուի սոկի ֆրանքով հաշուել բաժնեգինը:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԹԻՒԵՐԸ ՍՊԱՌԱՍ ԸԼԼալով մեր լոյս, կը խնդրուի անոնցմէ որոնք այդ թիւերէն ունին եւ «Նոր կեանք»ի հաւաքածոյ կազմելու մտադիր չեն, հաճիլ մեզ ղրկել զանոնք: Իրական ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան մեզի ատով: Այդ թիւերուն փոխարէնը կը հաշուենք իրենց բաժանորդագրութեան վրայ, զրկուած իւրաքանչիւր թիւի փոխարէն երկու թիւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱԺՆԱՆՈՐԴՆԵՐԷՆ կը խնդրենք որ իրենց բաժնեգինը մընի—օրաբերով ղրկեն մեզ, փոխանակ թղթաղրամ—տոլարի: Մընի—օրաբերները պէտք է ղրկել Լ. Ֆրանքի անուան, մեզի որոշակի յայտնելով ղրկողին անունը: